

Գ. Ստեփանյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՅԱՆՔԸ

Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը հայ գրականության զոհարաններից է: Այն, սկսած զրվելու տարվանից (1859 թ.) մինչև մեր օրերը արժանացել է հարյուրավոր հրատարակության, արտագրվել է տասնյակ հազարավոր մարդկանց կողմից, արտասանվել է, երգվել խանդավառելով պրոգրեսիվ գաղափարների համար պայքարող հոծ զանգվածների:

«Ազատություն» բանաստեղծության շուրջ ստեղծված այս բացառիկ հետաքրքրությունը պետք է բացատրել այդ երկի առաջավոր գաղափարական բովանդակությամբ և գեղարվեստական արժանիքներով, պոետական ինքնատիպությամբ: «Ազատությունը» հրապարակ եկավ այնպիսի մի ժամանակ, երբ հայ ժողովուրդը ապրում էր որպես ազգ ձևավորվելու պրոցեսը, որը կատարվում էր մի կողմից ֆեոդալական տնտեսաձևի, մյուս կողմից օտարերկրյա գաղութարարների դեմ մղվող բուռն պայքարում:

Ահա այսպիսի մի ժամանակաշրջանում էր, որ հրապարակվում էր «Ազատությունը», որտեղ բարձրացվում էր այն հարցը, թե մարդու համար բնության մեջ չկա ավելի մեծ բարիք, քան ազատությունը:

Այդ, ըստ էության, դարավոր խավարի, կիսաստրկական վիճակի մեջ դանդաղ հայ ժողովրդին դեպի ազատ կյանք առաջնորդող պայքարի կոչ էր: Չերմ, վարակող հայրենասիրությունը, ազատասիրությունը, որով տոգորված է բանաստեղծության ամեն մի տողը, Նալբանդյանը մատուցել է խորապես տպավորիչ պատկերներով, համեմատություններով, որոնց և ոչ մեկի մեջ նա չի կրկնում իրեն: Գունաղեղ վրձինով նկարված այդ երկում՝ սկզբից մինչև վերջը՝ վեր է խոյանում իր ամբողջ կյանքը ազատության համար մղվող պայքարին նվիրված մարտիկի կերպարը:

Էպիկական հանդարտությամբ սկսվող բանաստեղծությունը, որտեղ պատկերված է դեռևս օրորոցում հերոսին տոգորող ազատասիրությունը, աստիճանաբար խտանում է, որպես ուժգին պոռթկում մարդկային ամենաազնիվ ու միաժամանակ բուռն զգացումների, ապրումների:

Այդպիսին է բանաստեղծության վերջին ութնյակը, որը հանդիսանալով հեղինակի քաղաքական դավանանքի խտացումը, որպես ազատության համար մղվող պայքարի կոչ՝ ոգեշնչել է հայ ժողովրդին երկար տասնամյակներ:

Ազատություն՝ զոհեցի,
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ հուր երկաթ,
Թող դավ դնե թշնամին
Նա մինչ ի մահ կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ:

* * *

Մ. Նալբանդյանի «Ազատության» մասին կա այն կարծիքը, թե այն իր զրա կրում է Օդարյովի «Ազատություն», բանաստեղծության ազդեցությունը¹։

Արդարև նկատելի է որոշ նմանություն Օդարյովի և Նալբանդյանի համանուն բանաստեղծությունների միջև։ Նմանությունը ոչ միայն ընդհանուր, ազատասիրական ոգու մեջ է, այլև առաջ քաշված մի շարք մտքերի։ Օդարյովի բանաստեղծության հատկապես հետևյալ տողերը բնութագրական են այդ տեսակետից։

„Когда я был отроком тихим и нежным,
Когда я был юношей страстно-мятежным,
И в возрасте зрелом, со старостью смежном,
Всю жизнь мне все снова, и снова, и снова
Звучало одно неизменное слово:

Свобода! Свобода!

Измученный рабством и духом унылый
Покинул я край мой родимый и милый,
Чтоб было мне можно насколько есть силы,
С чужбины до самого края родного
Взывать громогласно заветное слово:

Свобода! Свобода!²

Մեր ուշադրությունը գրավել է մի ուրիշ բանաստեղծություն, որը նույնպես հիշեցնում է Նալբանդյանի «Ազատությունը»։ Դա Միխայիլովի «Իմ վիճակը» բանաստեղծությունն է, որի թարգմանությունը արևելահայ լեզվով լույս է տեսել 1885 թվականին, Կ. Պոլսում, Ա. Արփիարյանի խմբագրությամբ հրատարակվող «Մասիս» շաբաթաթերթում։ Բանաստեղծությունը ստորագրված է Միխայիլով, առանց անվան և հայրանվան սկզբնատառերի։ Ով է այդ Միխայիլովը։ Արդյոք ունյուցիոն դեմոկրատ Մ. Ի. Միխայիլովն է, թե մի այլ ուսուպոետ։ Մենք չկարողացանք պարզել։ Մ. Ի. Միխայիլովի թե՛ ընտիր և թե՛ լիակատար երկերի ժողովածուներում չենք հանդիպում վերոհիշյալ բանաստեղծությանը։

Բանաստեղծության թարգմանության լույս ընծայումը 80-ական թվականներին դժվարացնում է որոշակիորեն ասել, թե այն գրված է 1859 թվականից առաջ։ Սակայն նման ենթադրությունն անհավանական չէ. համենայն դեպս՝ այն մի շարք հատվածներով կապվում է Նալբանդյանի «Ազատության» հետ։

Եթե Օդարյովի և Նալբանդյանի բանաստեղծությունների համար բնորոշ է ազատության գաղափարի փառաբանումը՝ այդ գաղափարի վեհության գովերգումով, ապա Միխայիլովի բանաստեղծությունում այդ բանը կատարվում է՝ վախկոտության, ստրկության գաղափարի մերժումով ու ազատության հակադրությամբ։

«Իմ վիճակը» բանաստեղծության լիրիկական հերոսը հենց սկզբից արտահայտելով իր ատելությունը վախկոտների, թուլամորթների, մորթապաշտ-

¹ Այդ կարծիքը նախ հայտնել է ընկ. Ա. Մակարյանը իր «Մ. Նալբանդյանի պոեզիան» գիտերապիոն աշխատության մեջ։

² Н. П. Огарев, Стихотворения и поэмы, Москва, 1937, стр. 206.

ների, ուրիշի հաշվին ապրող և նրա ստվերում քարշ եկող մարդկանց նկատմամբ, հայտարարում է, որ ինքը այն մարդկանցից չէ, որոնք սիրում են «հարթված ճամփով» ընթանալ, անտարբերությամբ դիտել «զրկանք, հալածանք բռնակալություն», և որ նրա նպատակն է «երբեք փոթորկից չվախենալով» ակտիվ կերպով պայքարել ու մաշրել տատասկոտ, փշոտ ճանապարհը:

Նալբանդյանի նման՝ Միխայիլովի համար էլ բնորոշ է անհողդողդ հավատը ապագայի նկատմամբ: Նա հավատացած է «թե մրրկից հետո խաղաղ կյանք կգաս»:

Բանաստեղծության հատկապես մի քանի տները ոչ միայն իրենց ազատատենչ ոգով, ունյուցիոն պաթոսով, պայծառ լավատեսությամբ են հիշեցնում Նալբանդյանի «Ազատությունը», այլև իմաստային շատ նույնություններով: Բերենք երեք տուն «Իմ վիճակը» բանաստեղծությունից:

— Հազիվ լույս աշխարհ ընկա խավարից,
Մերկանդամ, բորիկ, նիհարած, անոթի,
Փռնոտ աշխարհը վիշտ ներշնչեց ինձ,
Կապեց կաշկանդեց դառն աշխատանքի:

Ես աշխարհ եկա կյանքի հետ կովել՝
Խորոտակել չարը իմ ազատ հոգով,
Մինչ առողջ կուրծքս վիշտը չի լսիել
Ստրուկ դարձրել, խոնարհել գլխով:

Արձակ, համարձակ, դարձյալ նույն շավղով
Սկսյալ այն օրից ես ընթանում եմ
Զրկանք, հալածանք սուր մագիլներով
Ինձ չեն սարսափում և ես ազատ եմ¹:

Նմանություն Միխայիլովի և Նալբանդյանի բանաստեղծությունների միջև նկատելի է, սակայն Նալբանդյանի «Ազատությունը» ո՛չ Օգարյովի և ո՛չ էլ Միխայիլովի վերոհիշյալ բանաստեղծությունների փոխադրությունը չէ: Այն միանգամայն ինքնուրույն մի ստեղծագործություն է: Ավելին, այն իր արծարծած դաղափարներով և գեղարվեստական արժանիքներով կանգնում է այդ բանաստեղծությունների բարձրության վրա և իրավամբ կարող է դասվել համաշխարհային պեոգիայի լավագույն նմուշների շարքում:

Նախասովետական տարիների հայ պոեզիայի և ոչ մի նմուշ այնպիսի արագ տարածում չի ունեցել, ինչպես Նալբանդյանի «Ազատությունը»: Այն, որպես ազատության հուժկու զանգ հնչելով հեռավոր հյուսիսում՝ ամենակարճ ժամանակամիջոցում իր ղողանջները հասցրեց աշխարհի այն բոլոր ծայրամասերը, որտեղ ապրում էին հայեր, ամենուրեք խորը ազդեցություն թողնելով հասարակական մտքի վրա:

Ներկա աշխատության նպատակն է պարզել այդ արձագանքների շրջանակները, չխոսելով հայ շափածո գրականության վրա նրա թողած ազդեցության մասին, որն առանձին ուսումնասիրության նյութ է:

¹ «Մասիս», 1885, № 3781:

* * *

«Ազատություն» բանաստեղծություն հարյուրամյա կյանքը պայմանականորեն կարելի է բաժանել հինգ շրջանի:

ա) «Ազատության» լույս ընծայման թվականից մինչև 60-ական թվականների վերջերը: Այս տասնամյակի համար բնորոշ է բանաստեղծության արագ տարածումը արտատպությունների և արտագրությունների միջոցով:

բ) 70-ական թվականների սկզբներից մինչև ռուս-թյուրքական պատերազմի վերջը: Այս երկրորդ տասնամյակի համար բնորոշ է «Ազատության» տարածումը ոչ միայն տարբեր հրատարակություններով, դասագրքերով, այլև որպես երգ մասսայականացումը և արտասանումը բեմից:

գ) Ռուս-թյուրքական պատերազմից հետո՝ մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը: Այս 25-ամյակի համար բնութագրական է նալբանդյանի երկերի արգելումը թե՛ թյուրքիայում և թե՛ Ռուսաստանում, նրանց՝ գերազանցապես անլեզալ տարածումը ժողովրդի մեջ, «Ազատություն» բանաստեղծության օգտագործումը գաղտնի ճանապարհով:

դ) 1905 թ. ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակից մինչև 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի օրերը: Այս տասնամյակի համար բնորոշ է նալբանդյանի երկերի տպագիր պրոպագանդայի մասնակի հնարավորությունը, «Ազատություն» բանաստեղծության բազմացումը տարբեր հրատարակությունների միջոցով:

ե) Սովետական շրջան, երբ նալբանդյանի գրական ժառանգությունը արժանացավ լիակատար ու բազմաթիվ հրատարակությունների և գնահատվեց ըստ արժանվույն, երբ «Ազատություն» բանաստեղծությունը դարձավ հայ գրականության քրեստոմատիաների հիմնական նյութերից մեկը:

Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը առաջին անգամ լույս է տեսել «Հյուսիսափայլում» 1859 թվականի սեպտեմբեր ամսին, որպես «Հիշատակարանի» մի հատվածը:

Ինչու նալբանդյանը գրական այդպիսի մի գոհար լույս չի ընծայել որպես առանձին բանաստեղծություն: Արդյոք այդտեղ դեր կատարել է ցենզուրական նկատառումը, թե դա բխել է պարզապես նյութի շարադրանքից: Մեր կարծիքով դա պատահականություն արդյունք չէ: Բանաստեղծության մշակված, միավարտուն վիճակի հասցված լինելու հանգամանքը վկայում է, որ այն չի գրվել միանգամից, այլ արդյունք է լուրջ աշխատանքի: Հնարավոր է ենթադրել, որ նալբանդյանը «Ազատության» հղացումը ունեցել է ոչ թե իր արտասահմանյան ուղևորության ընթացքում «Հիշատակարանի» ույդ հատվածը գրելու օրերին, այլ ավելի վաղ՝ Մոսկվայում: Անհավանական չպետք է թվա, որ «Ազատություն» գրվել է ավելի շուտ, քան տպագրվել է:

Տպագրվելով «Հյուսիսափայլում», «Ազատությունը» տարածվում է Ռուսաստանի, մասնավորապես Կովկասի բոլոր հայաշատ վայրերում: Դիշտ է, «Հյուսիսափայլի» պաշտոնական բաժանորդների թիվը մի քանի հարյուր էր: սակայն միամտություն կլինի կարծել, թե դրանց կողքին չեն եղել հազարավոր մարդիկ, որոնք ձեռք են բերել հետաքրքիր ժտնալը և ընթերցել:

Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ «Հյուսիսափայլի» ընթերցողների ճնշող մեծամասնության նախասիրած հեղինակը եղել է Մ. Նալ-

բանդյանը, ինչպես այդ մասին վկայում են Մ. Տեր-Գրիգորյանը, Ղ. Աղայանը և ուրիշները, ասյա պարզ կարող է դառնալ, որ 1859 թվականի աշնանը «Ազատությունը» լայն տարածում էր գտել արևելահայ իրականության մեջ:

Թյուրքիայում ստացվում էր ընդամենը մի քանի օրինակ «Հյուսիսսփայլի»: Դրանցով ղեկավար էր տարածել «Հյուսիսսփայլի» միջոցով Թյուրքիա թափանցող Նալբանդյանի առաջավոր գաղափարները: Կ. Պոլսում, սակայն, հրապարակվում էր Հ. Սվաճյանի դեմոկրատական «Մեղուն», որը պարբերաբար արտատպելով Մ. Նալբանդյանի արձակ և շափածո գործերը, լայնորեն մասսայականացնում էր դրանք, հասցնելով երկրի ամենահեռավոր անկյունները: Հ. Սվաճյանին է պատկանում «Ազատությունը» որպես առանձին բանաստեղծություն հրատարակելու պատիվը: Նա «Մեղվի» 1860 թվականի № 109-ում տպագրելով այն, Թյուրքիայի հարյուրավոր քաղաքներում ապրող հազարավոր հայերին հնարավորություն տվեց իրենց ձեռքի տակ ունենալու, արտագրելու ու բազմացնելու Նալբանդյանի այդ հոյակապ աշխատությունը:

«Մեղվից» հետո Հնդկաստանում հրատարակվող «Եղբայրասերն» է, որ Նալբանդյանի ձերբակալության առթիվ գրած ջերմ առաջնորդողի հետ միասին արտատպում է «Ազատությունը» և դրանով նպաստում այդ բանաստեղծության տարածմանը՝ հնդկահայ և պարսկահայ դադուիներում:

«Ազատություն» բանաստեղծության մասսայականացմանը մեծապես նպաստում է «Հյուսիսսփայլի» աշխատակիցներից Միանսարյանի «Քնար հայկական» երգարանը, որը հրատարակվել է Մոսկվայում 1868 թվականին: Միանսարյանը, զգուշանալով հանգերձ դեռևս նոր մահացած քաղաքական քսորական Նալբանդյանի «Երկրագործության» և այլ ուսույցի ու բովանդակությամբ ստեղծագործությունների մասին խոսելուց, ուշադրավ տեղեկություններ է տալիս Նալբանդյանի կյանքի և գրական գործունեության մասին, միաժամանակ արտատպելով «Ազատությունը» ամբողջությամբ²:

Այսպիսով, «Ազատություն» բանաստեղծությունը հենց առաջին տասնամյակում արագորեն տարածվում է Ռուսաստանում, Կովկասում, Թյուրքիայում, Պարսկաստանում և Հնդկաստանում: «Մեղուն», «Հյուսիսսփայլը» և «Քնար հայկական» անշուշտ ընթերցողներ ունեին նաև այլ վայրերում (Ֆրանսիա, Բալկանյան երկրներ և այլուր), որտեղ նույնպես նրանց միջոցով տարածվում է «Ազատությունը» և դրանով ամբողջ աշխարհի հայերին մատչելի դառնում:

* * *

Մեզ չհաջողվեց պարզել, թե առաջին անգամ ո՞ր թվականին է ձայնագրվել «Ազատությունը»:

Մի փաստ, սակայն, վկայում է, որ հենց 60-ական թվականների վերջերից այն ոչ միայն արտասանվում էր, այլև երգվում:

Վ. Միրաքյանը Գր. Տեր-Մելիքսեթեկյանի մասին գրած իր հետաքրքրական հոշերում պատմում է.

«Առաջին անգամ Գրիգորը 1869 թ. գալիս է Շուշավերու նա շատ քաղցր, ոլորուն ձայն ուներ, ժամի արարողությունը լավ գիտեր, տերտերները խնդրեցին, որ ժամում՝ պատարագին երգի: Գրիգորը դպրություն արեց, ժամավոր-

¹ «Եղբայրասեր», Տասնօրյա լրագիր, 1863, № 33:

² «Քնար հայկական», Խմբագրեց Մ. Մ. Միանսարյանը, Պետերբուրգ, 1868, էջ 542:

ները հիացած էին: Վերջը «Քրիստոս պատարագյալի» տեղ կլկլան ձայնով վեր քաշեց «Աղատն աստված» արգելված երգը: Քահանաներն իրենց գլխով դիպան, շթողին մինչև վերջը հասցնի ու լռեցնելով մի կերպ հեռացրին ժամից հակառակ ժողովրդի կամքի: Ժողովուրդն առաջին անգամ լսելով հասկանալի բառերով Գրիգորի երգած հրաշունչ երգը, խնդրում էր նրան շարունակել: Բայց տերտերներն արգելում էին, ասելով, որ այդ արգելված երգ է. դրա համար երգողին, լսողներին էլ կբանտարկեն»¹:

Միրաքյանի պատմած այս դեպքը միաժամանակ վկայում է, թե ինչպես 60-ական թվականների վերջերին հայ իրականության մեջ նախադյանի գաղափարների շուրջը տեղի էին ունենում ուժգին բախումներ՝ անգամ ցարական կառավարության խստագույն հետապնդումների պայմաններում:

Հենց այդ թվականներից էլ «Աղատությունը» ձայնագրված արտագրվում է ձեռագիր երգարաններում ու մասսայականացվում: Հայկական ՍՍԻՄ Մատենադարանում պահպանվում է մի ձեռագիր երգարան, որն ամենայն հավանականությամբ գրված պետք է լինի 70-ական թվականների սկզբներին: Այնտեղ ձայնագրված է Մ. Նախադյանի «Խալաթի աղջկա երգը» բանաստեղծությունը և արտագրված է «Աղատությունը»՝ առանց եղանակի: Գրեթե նույն տարիներին արտագրված մի այլ երգարանում, որը նույնպես պահպանվում է մեր Մատենադարանում, «Աղատությունը» արդեն ձայնագրված է հայկական խաղերով:

Հետագայում մենք հանդիպում ենք այդ բանաստեղծության մեկից ավելի ձայնագրումներին, տարբեր երգարաններում, մասնավորապես Ներսիսյան դպրոցի, Գևորգյան ճեմարանի, Լազարյան ճեմարանի, Սանասարյան վարժարանի, Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանի և այլ դպրոցների աշակերտների երգարաններում միշտ հայկական խաղերով: 900-ական թվականներից հետո է միայն, որ այն ձայնագրվում է նաև նոտաներով: 1890 թ. այն ձայնագրում է կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզան:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում «Աղատությունը» մնում է հայ ժողովրդի ամենասիրած երգերից մեկը:

Բանաստեղծ Հ. Հակոբյանը գրում է. «Մանկությունից իմ սիրած առաջին հայ բանաստեղծը Միքայել Նախադյանն էր իր «Աղատն աստված» բանաստեղծությունով»:

Հակոբյանի այս վկայությունից երևում է, որ 70-ական թվականներից, անշուշտ նաև ավելի շուտ, — արևելահայ երիտասարդությունը Մ. Նախադյանին ճանաչում էր որպես առաջին հերթին «Աղատության» հեղինակի, և ճանաչում ու սիրում էր՝ արտասանելով, երգելով համաժողովրդական դուրձած այդ երգը:

Թե «Աղատությունը» որքան խորն է տղերի երիտասարդության վրա, որքան ջերմ հայրենասիրությամբ համակել նրանց, երևում է Հ. Հակոբյանի հետևյալ վկայությունից.

«Գարնան մի սքանչելի առավոտ էր, — դրում է Հակոբյանը, — կիրակի էր... հարևան բակից: օդը ճեղքելով, ականջիս դիպավ մի անուշ երգի ձայն: Մեր երգեցողության ուսուցիչ և հարևան Ավետիք վարժապետի ձայնն էր այդ, «Աղատն աստված» էր երգում»:

¹ Հայկական ՍՍԻՄ ԳԱ-ի Գրականության և արվեստի թանգարան, Վ. Միրաքյանի ֆոնդ:

Հայրենի համայնք ¹⁾

(Երևանի համայնքի մասին)

Հայրենիքի մասին համայնքի
հարցի և իր թե՛ մասին համայնքի
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին

Օրենքի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին

Հայրենիքի մասին համայնքի
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին

Հայրենիքի մասին համայնքի
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին
հարցի մասին համայնքի մասին

Հ. Հայրենիքի մասին համայնքի մասին

Մեխվել էի սանդուղքի ամենաբարձր աստիճաններից մեկի վրա, շունչս սլահած, զմայլանքով լսում էի վարժապետիս երգը, որի փափուկ, թավ ձայնը քանի գնում ավելի էր ուժեղանում ալեծածան, որոտումով:

...«Ազատություն»-ն սիրեցի... խիզախում էր ձայնը իր կրծքային շոյող ջերմությամբ մերթ ծանր, փառահեղ, մերթ արագ շեշտերով:

...«Ազատություն»-ն գոչեցի... ի՛հի՛» ալեկոծվում էր ձայնը ավելի և ավելի նվաճելով իմ մանուկ հոգին... Եվ երբ արդեն վերջացել էր երգը, այնտեղ, հենց այն սանդուղքի բարձունքի վրա զգացի, որ մեջս կանաչել էր նորաբողբոջ, ոգեշունչ մի պարտեզ: Այստեղ առաջին անգամ զգացի, որ բացվեց հոգուս աչքը, որ մեկը թելադրեց սիրել ազատությունը, ներշնչվել նրա վերամբարձ գեղեցկությամբ ու հմայքով:

Այնուհետև, ամեն անգամ, երբ իմ պատանյակ հոգուն տիրում էր մի ճնշող ու տարտամ տրամադրություն, իսկույն միտս էի բերում Ավետիք վարժապետիս «Ազատն աստված»-ը՝ նրա ջերմացնող, զարնան ավետումի խրոխտ խոսքերով և զգում, թե ինչպես խթանի պես արթնանում, սթափվում ու խանդավառվում էր իմ հոգին, ճիշտ այնպես, ինչպես ննջող արծիվը իր աչքերն է սրում-լայնացնում, երբ հեռվից լուռ բնության մեջ մի շաշող ձայն է լսում...

Թող անմոռաց մնա այն օրը պայծառ, երբ վաղ գարնանային մի առավոտ ևս բարձրացած մեր թթենու վրա, նրա մատաղ շիլերից տերևներ էի քաղում մորս շերամների համար, և երբ Ավետիք վարժապետը սրտաբուխ, հյութալի, բամբ ձայնի հնչյունները գալիս էին բուրալի հոսանքով, ներս խուժում պատանյակ սրտիս խորքերը, այլևս այնտեղից դուրս չգալու մինչ այն օրը, երբ առաջին անգամ առնական հասակիս սկսեցի երգել միջազգային ինտերնացիոնալը»¹:

* * *

«Ազատություն» բանաստեղծությունը մասսաներին ոգևորել, խանդավառել, պայքարի է կոչել ոչ միայն որպես երգ, այլև որպես արտասանվող մարտական բանաստեղծություն: Երկար տասնամյակներ այն եղել է դպրոցական տարեվերջի ավարտական հանդեսներում արտասանվող սիրված բանաստեղծություններից մեկը: Այն շատ դերասան-դերասանուհիներ արտասանել են հավաքույթներում, հանդիսավոր երեկոներում:

Մենք ղրանց վրա կանգ չենք առնում, այլ ցանկանում ենք նշել միայն, թե այդ բանաստեղծությունը ինչպես է օգտագործվել հայ բեմում՝ մասսաների մեջ ազատասիրական զգացումներ բորբոքելու, նրանց խանդավառելու, դեպի քաղաքական պայքարի կոչելու նպատակով: Այդ հարցը կարևոր է ոչ միայն հայ հասարակական մտքի պատմության համար, այլև՝ քաղաքական այն մտայնության համար, որը տիրապետող է եղել 19-րդ դարի երկրորդ կեսում:

«Ազատություն» բանաստեղծության թատերական բեմերից օգտագործվելու վերաբերյալ առաջին հիշատակությունները գտնում ենք 1867 թվականի առաջին ամիսների մամուլում:

Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ քաղաքական այդ աշխատանքի նախաձեռնողների շարքերում մենք տեսնում ենք առաջին հերթին

¹ Հակոբ Հակոբյան, Երկեր, 1951, էջ 362—363:

Հ. Սվաճյանին և նրա խմբագրությանը լույս տեսած «Մեղու» պարբերականի շուրջ համախմբված առաջավոր մտածողներին:

Հ. Սվաճյանը, որ մոտիկից հետևում էր 1861 թվականին Կ. Պոլսում հիմնադրված «Արևելյան թատրոնի» ռեպերտուարին, ձգտում այդ թատրոնի ժողովրդականացմանն ու դեմոկրատացմանը, ծրագրված աշխատանք է կատարում ինքնուրույն դրամատուրգիայի զարգացման համար:

Այս նպատակով նա գրում է մի պիես՝ «Առանձար Ամատունի» վերնագրով, որը նախապատրաստական լուրջ աշխատանքից հետո «Արևելյան թատրոնի» դերասանների կողմից և լսնմիջապես «Մեղվի» նախաձեռնությամբ բեմադրվում է 1867 թվականի փետրվար ամսին:

«Առանձար Ամատունի» բեմադրությունը ծանուցանող հայտարարության մեջ մենք գտնում ենք մի հիշատակություն, թե «փոքրիկ օրիորդ մը՝ Մարթա անուն, երգ մ'ալ պիտի երգե»: Թե այդ փոքրիկ օրիորդը ինչ է երգել, այդ մասին ոչինչ չի ասվել:

Որոշ փաստեր, որոնց մասին կխոսվի ստորև, մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ օրիորդ Մարթան երգել է Մ. Նալբանդյանի «Ազատությունը», բայց մամուլը զգուշացել է այն հայտարարելուց:

1867 թվականի փետրվար ամսին, նույն «Առանձար Ամատունի» պիեսի բեմադրման օրերին Հ. Սվաճյանը և նրա համախոհները ծրագրում են մի փառավոր ներկայացմամբ հավերժացնել Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձը:

Կազմվում է ճոխ ծրագիր: Դրամատուրգ Ռ. Սետեֆճյանը գրում է մի պիես «Վարդան Մամիկոնյան փրկիչ հայրենյաց» վերնագրով: Կոմպոզիտոր Տ. Զուհաճյանը գրում է «Վարդան Մամիկոնյան փրկիչ հայրենյաց» պիեսի երաժշտությունը: Երեկոյի երկրորդ մասի համար ծրագրվում է տալ մի զեկուցում Մ. Նալբանդյանի կյանքի և ուսույցի գործունեության մասին և արտասանել «Ազատություն» բանաստեղծությունը:

Այս պատմական ներկայացման հայտարարության մեջ մենք դարձյալ հանդիպում ենք վկայության, թե ընդմիջմանը կատարվելու է մի բանաստեղծություն («Միջերգ՝ տաղերգություն՝ ի Վերգինիա Դարագաշյանի»):

Ինչպես նախորդ «Առանձար Ամատունի» հայտարարության մեջ, այստեղ էլ չի ասված, թե ինչ էր արտասանելու կամ երգելու Վ. Դարագաշյանը:

Ներկայացումը անցնում է աննախընթաց հաջողությամբ և ժողովրդի պահանջով կրկնվում: Այս երկրորդ երեկոյին վերաբերող հայտարարության մեջ է, որ արդեն հայտնվում է թե արտասանվող բանաստեղծության հեղինակն է Մ. Նալբանդյանը:

Ահա այդ հայտարարությունը. — «Հանդես ազգային: Վարդան Մամիկոնյան: Այս ընտիր և սրտադրավ ողբերգությունը... ի խնդրո բազմաթիվ ազգայնոս երկրորդ անգամ պիտի ներկայացվի Նաումի թատրոնի մեջ ավելի փառավոր կերպով. ի հիշատակ պ. Մ. Նալբանդյանցի, որուն վրա ալ նաև գեղեցիկ բանախոսություն մը և իւ մեկ գողտրիկ տաղերգությունը պիտի արտասանվին Դարագաշյան օրիորդներեն»¹:

Մ. Նալբանդյանցի կյանքին նվիրված ճառը, որի հեղինակը ամենայն հավանականությամբ եղել է Հ. Սվաճյանը, կարդացել է դերասանուհի Ծրանուհի

¹ «Մասիս», 1867, հունվարի 24:

Գարագաշյանը, իսկ «Գողտրիկ բանաստեղծությունը», այսինքն՝ «Ազատությունը» արտասանել է նրա քույրը՝ Վերգինե Գարագաշյանը:

Թե որքան մեծ աղմուկ է հանել Սվաճյանի նախաձեռնությամբ կազմակերպված այդ երեկոն, երևում է այն փաստից, որ այն նույնությամբ կրկնվել է նաև երրորդ անգամ:

Դրանից հետո՝ շնայած պաշտոնապես արգելվում է Նալբանդյանի երկերի տպագրությունն ու մասսայականացումը և մամուլն էլ զգուշանում է նրա անունը հիշատակելուց, այնուամենայնիվ, «Ազատությունը» շարունակվում է մնալ առաջավոր երիտասարդության սիրած բանաստեղծությունը:

Մի ամբողջ հնգամյակ մենք այլևս մամուլում հիշատակություն չենք գտնում Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության կատարման վերաբերյալ: Մեկ էլ՝ 1872 թ. հունվար ամսին Կետիկ փաշայի թատրոնում տրված մի ներկայացումից հետո արտասանվել է այն:

Վերոհիշյալ ներկայացման մասին մամուլում տպագրված հայտարարություն մեջ ի միջի այլոց կարդում ենք հետևյալը. «...Ազատն աստված». խոսք բարեհիշատակ ու. Նալբանդյանի: Արտասանյալ օր. Վ. Գարագաշյանե»¹:

Ինչ խոսք, որ նույն թվականներին «Ազատությունը» բազմաթիվ այլ առիթներով էլ է կատարվել, սակայն ցենզուրական նկատառումներով մամուլում չի հայտարարվել այդ մասին:

Մամուլում արձանագրված հաջորդ դեպքը զուգահեռվում է 1873 թվականի հունվարի 27-ին, երբ «Կամելիազարդ տիկին» պիեսի բեմադրությունից հետո զարձյալ արտասանվում է Նալբանդյանի «Ազատությունը»:

Ուշագրավն այն է, որ «Ազատությունը» արտասանվում էր ոչ միայն պրոզերեսիվ դադափարներ տարածելու կոչում ունեցող թատերախմբերի կողմից, այլ անգամ Վարդուկյանի խմբի, որը իր ներկայացումները տալիս էր վերոհիշյալ Կետիկ փաշայի թատրոնում: Հայտնի է, որ Վարդուկյանը, սուլթանական կտուրուկությունից ստանալով հայ թատրոնի մենաշնորհը, ամբողջ տասը տարի եվրոպական մեղեդիամեներով հաղեցված ռեպերտուարով ցանկանում էր հակադրվել «Արևելյան թատրոնի» խմբին, որի նպատակն էր զարկ տալ ինքնուրույն սզգային թատրոնի զարգացմանը: Վարդուկյանն այդ տասը տարիների ընթացքում տվել է մոտ 500 ներկայացում, բեմադրելով 50-ից ավելի պիեսներ: Դրանց մեջ աննշան թիվ են կազմում ինքնուրույն պիեսները (Պեշիկթաշլյան, Դուրյան և այլն) այն էլ գերազանցապես հանդիսատեսներին թատրոնի հետ կապելու նպատակով տրված: Շատ հաճախ հանդիսատեսներն են պահանջել նման պիեսների բեմադրությունը: Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության կատարումն էլ Վարդուկյանի խմբում՝ հետապնդել է նույնպիսի նպատակ և նույնպես եղել է ժողովրդի պահանջով, ժողովրդի, որը ձանձրացած այդ խմբում կատարվող բուլվարային երգերից ու էժանագին զավեշտներից, պահանջել է դադափարական բովանդակությամբ հազեցված գործեր: Այդ երեկում է մամուլում տպված հայտարարության հետևյալ տողերից. «Ըստ խնդրանաց հասարակության՝ «Ազատն աստված» պիտի արտասանե օր. Վ. Գարագաշյանը»:

¹ Այս մասին ավելի ընդարձակ տեղ մեր «Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձին նվիրված մի ուշագրավ ներկայացում» հոդվածում, «Տեղեկագիր», 1951, № 11:

Այնուհետև տարբեր առիթներով դարձյալ այս կամ այն ներկայացումից հետո արտասանվում է «Ազատությունը»:

Մ. Նալբանդյանի մահից տասը տարի հետո, նրա Կ. Պոլսի համախոհները շրջում են Նալբանդյանի մահվան տասնամյակը հավերժացնել՝ կազմակերպելով նույն այն պիեսի հանդիսավոր բեմադրությունը, որով նշվել էր նրա մահվան առաջին տարեդարձը և պատճառ դարձել «Արևելյան թատրոնի» փակմանը:

Ռուս-թյուրքական պատերազմին նախորդող այդ ամիսներին թյուրքական կառավարությունը՝ խճճված իր արտաքին՝ դիվանագիտական զործերի մեջ, մասամբ թուլացրել էր ներքին ցենզուրական խստությունները: Նալբանդյանի անունը համեմատաբար յուրաքանչյուր տպագրվում և հիշատակվում էր: Նման պայմաններում դժվար չէր կրկնել տաս տարի առաջվա համարձակ քայլը: Վերոհիշյալ հանդիսավոր ներկայացման մասին լիբերալ «Մասիս» թերթը, որը բոլոր ներկայացումների հայտարարությունները տպում էր, զգուշացել է որևէ ծանուցում հրապարակելուց: Այդպիսի հայտարարություն տպել է «Միմոս» էրզիթաթերթը: Ահա շատ սեղմ այդ հայտարարությունը, որը միակ աղբյուրն է վերոհիշյալ ներկայացման մասին:

«1876 թ. փետրվար. «Մեծն Վարդան Մամիկոնյան», «Ազատն աստված այն օրից» քերթված անմահին Մ. Նալբանդյանցի»:

Դժբախտաբար ժամանակի մամուլում այս երեկոյի մասին այլ տեղեկություն չի արձանագրվել, և մենք չգիտենք, թե արդյոք ներկայացումը ունեցե՞լ է այնպիսի հաջողություն, ինչպես Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձի օրը, թե անցել է աննկատելի:

Այդ ամիսներին Պոլսի հաջ պրոդրեսիվ ինտելիգենցիան դեռևս որոշ զգուշություն հանդես բերել է Նալբանդյանի դադափարների տարածման դործում: Ռուս-թյուրքական պատերազմի առաջին օրերից դրությունը փոխվում է: Դարերով թյուրքական բռնապետական ռեժիմի պայմաններում դալարվող հայ ժողովուրդը պատերազմի սկսվելու առաջին օրերից լցվում է անսահման խանդավառությամբ, ռուսական ղեկի հաջողության մեջ տեսնում հայ ժողովրդի միակ փրկությունը:

Ռուսական դորքի առաջացումը՝ մինչև պատմական Հայաստանի կարևոր քաղաքները, մինչև էրզրումի դաշտերը, իսկ Բալկաններից մինչև Սան-Ստեֆանո, հայ ժողովրդին համակում է լավատեսությամբ, նկատելի չափով քաղաքական ակտիվություն է տալիս նրան: Եթե աշխատավորական խավերի, մասնավորապես բազմահազար պանդուխտ հայերի մոտ քաղաքական այդ աշխուժացումը նկատվում էր զենք վերցնելով դեպի հայրենիք վերադառնալու, ազատագրվող հայ քաղաքների ու գյուղերի հետ ռուսական զերիշխանության տակ անցնելու ձգտումով, ապա պրոդրեսիվ ինտելիգենցիայի մոտ այն արտահայտվում էր ռուսական զենքի պրոպագանդայով, ազատագրական գաղափարների բորբոքումով, թյուրքական բռնակալական ռեժիմի մերկացումով: Այս հարցերն են, որ հիմնականում արժարժում է Հ. Սվաճյանի պանծալի դործը շարունակող Հ. Պարոնյանը «Թատրոն» պարբերականում, որտեղ արդեն Մ. Նալբանդյանի «Երկրագործությունից» մեջբերումներ էր կատարվում:

Խանդավառ այս օրերին Պոլսի հայ բեմը խոշոր դեր է կատարում ազգային ազատագրական գաղափարների տարածման ուղղությամբ: Հայ թատերախմբերի զգալի մասը գաստրոլների է գնում ռուսական բանակում և

տալով բազմաթիվ ներկայացումներ, ռուս զորքին ծանոթացնում է այն ժողովրդի կուլտուրայի հետ, որն իր ազատությունը սպասում էր ռուսական զենքից։ Նկատելի փոփոխություն է կատարվում հայ թատրոնի ռեպերտուարում։ Նվրոսյական մեյդդրամների, զավեշտների փոխարեն գերազանցապես բեմադրվում են ազգային զգացումներ բորբոքող պիեսներ։

Բեմադրություններից հետո արտասանվում են ոչ թե ապոլիտիկ երգեր, ինչպիսիք էին «Քթից դժգոհ աղջիկը» և այլն, այլ հայ քաղաքական պոեզիայի լավագույն նմուշները։

Ինչպես 60-ական թվականներին, նորից հայ բեմում հնչում են Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Ղ. Ալիշանի և Մ. Պեշիկթաշլյանի հայրենասիրական երգերը։ Այս բոլորի մեջ կարևոր տեղ է գրավում Մ. Նալբանդյանի «Ազատություն» հռչակավոր բանաստեղծությունը։

Այս շրջանի համար բնորոշ է նաև մի այլ հանգամանք, եթե մինչ այդ Պատկանյանի և Նալբանդյանի երկերի կատարումով հանդես էին գալիս դերասանուհիները, հատկապես Վ. Գարազաշյանը, որոնք իրենց քնքուշ կատարմամբ ունկնդիրներին հուզում էին՝ նրանց ներարկում հայրենասիրական զգացում, ապա այժմ՝ պատերազմական փոթորկոտ օրերին, վերոհիշյալ երկերի կատարմանը տրվում էր մարտական թափ և ծառայեցվում քաղաքական ագիտացիայի։

Այսպիսի պատասխանատու գերով հանդես է գալիս տաղանդավոր դերասան Պետրոս Աղամյանը, որի բեմական գործունեության մեջ նշանակալից տեղ է գրավում ռուս-թյուրքական պատերազմի օրերին կատարած այդ աշխատանքը։

Պ. Աղամյանն այդ օրերին Պոլսի գրեթե բոլոր թաղամասերում հանդես է գալիս ազգային ներկայացումներից հետո՝ հայրենասիրական քաղաքական պոեզիայի լավագույն նմուշների կատարումով։

1878 թվականին Թիֆլիսի «Մշակ» թերթի 4. Պոլսի թղթակից Ա. Արփիարյանը գրում էր.՝

«Այսօր փառավոր ներկայացում պիտի տրվի։ «Աղքատք Փարիզում» ներկայացվել են ետքը Մ. Նալբանդյանցի «Ազատություն» բանաստեղծությունը շարժումներով պիտի արտասանեն առաջին կարգի դերասան Պ. Աղամյանը, ինչպես ուրիշ անգամներ ալ արտասանած է «Հիմի էլ լռե՛նք»¹։

* * *

Նույն այս 1867—77 տասնամյակում է, որ Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը ստրածվում է հասարակության մեջ՝ տպագրված Նալբանդյանի մեծագիր նկարի վրա։ Այս մասին առաջին հիշատակությունը մենք գտնում ենք 1867 թվականի մամուլում։

Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձի առթիվ կազմակերպված վերոհիշյալ հանդիսավոր ներկայացման երրորդ անգամ կրկնվելու առթիվ մամուլում հրապարակված հայտարարությունների մեջ է, որ ծանուցվում է, թե վաճառվում է «Մ. Նալբանդյանցի լուսանկար պատկերը՝ որոնք ներքև ազատության վրա իր հորինած գողտրիկ երդը տպված է»²։

Ինչպես ասվեց, 1867 թվականի հայտնի ներկայացումից հետո արգելվեց

¹ «Մշակ», 1878, № 43։

² «Սասիս», 1867, ապրիլի 6։

Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության և նրա նկարի տարածումը: Այնուհետև, մինչև ռուս-թյուրքական պատերազմի օրերը, մենք այլևս չենք հանդիպում որևէ հիշատակության Նալբանդյանի նկարի մասին:

1877—78 թվականի ռուս-թյուրքական պատերազմի առաջին օրերից նորից սկսվում են բազմացվել Հայկ Նահապետի, Վարդան Մամիկոնյանի և Միքայել Նալբանդյանի նկարները, որոնց մասին ազատորեն գրվում է նաև մամուլում, ծանուցվում նրանց բազմացման ու տարածման մասին:

70-ական թվականների սկզբներից Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը նկարի հետ միասին լայնորեն տարածվում է Կովկասում:

Հայտնի է, որ Մ. Նալբանդյանի ձեռագրավորությունից անմիջապես հետո Նալբանդյանը, որպես քաղաքական արքայական, արգելված անուն էր ռուսական կայսրության բոլոր քաղաքներում: Նրա մասին զգուշանում էին դրել թերթերը, երբեմն միայն համարձակվելով այս կամ այն հրատարակության մեջ հիշատակել Նալբանդյանի անունը: Ցարական կառավարությունը նկատում էր, որ Մ. Նալբանդյանի մահից հետո ոչ միայն չէր վերանում նրա գաղափարների ազդեցությունը հայ երիտասարդության վրա, այլ առավել ևս մեծանում էր: Մ. Նալբանդյանի դիակի հանդիսավոր տեղափոխությունը Նոր Նախիջևան և փառահեղ թաղումը, դամբանական հայրենասիրական ճառերը վկայում էին, որ Նալբանդյանը հեռանում էր՝ իր ետևից թողնելով համախոհների հոծ բազմություն:

Ցարական կառավարությունը համոզված էր, որ Նալբանդյանի համախոհները միայն Նոր Նախիջևանում չէ որ կենտրոնացել էին, նրանք նույնքան մեծ թիվ էին կազմում նաև Անդրկովկասի քաղաքներում, մասնավորապես Թիֆլիսում, Բաքվում, Նրևանում և այլն:

Նույն այդ մարդկանց նախաձեռնությամբ է, որ 70-ական թվականների սկզբներից արտագրվում և բազմացվում են Մ. Նալբանդյանի հայրենասիրական բանաստեղծությունները և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը:

1872 թվականին Թիֆլիսում մի խումբ գիմնազիստներ փող են հավաքում և որոշում վիմատիպ բազմացնել Մ. Նալբանդյանի նկարը, «Ազատություն» բանաստեղծությունը վրան տպված և այն ձրի տարածել աշակերտների մեջ:

Ահա թե ինչ է սլատմում այդ մասին Սարգիս Քամալյանն իր հուշերում.

«Այս բանը 1872 թվականի աշնանն էր: Այդ ժամանակ Նալբանդյանց Միքայելը հայ աշակերտության պաշտելի կուռքն էր: Շատ դժվար էին ձեռք բերում նրա «Երկրագործություն» և «Երկու տող» բողջությունները, — բայց ամենն էլ փափագում էին անպատճառ մի անգամ կարդալ և լիք հնար է՝ արտագրել, ծածուկ պահել: Բոլորը անգիր դիտեին նրա հրաշունչ «Ազատն աստված» բանաստեղծությունը, որ շատ սրտագրավ եղանակ ուներ, բայց քաղաքում երգել արգելված էր, ոստիկանության աչքից հեռու երգում էին դաշտերում, բուսաբանական այգու կողմերում: Խիստ հազվագյուտ էր Նալբանդյանի լուսանկարը, ոչ մի հնով չէր ճարվում:

Մի խումբ գավառացի հայ տղերք — սիմինարիստ, գիմնազիստ, վճռեցին Նալբանդյանցի պատկերը՝ «Ազատության երգը» վրեն՝ բազմաթիվ օրինակներով վիմատիպ դուրս բերել ու ձրի տարածել»¹:

¹ «Սովետական դրականություն», 1941, № 4, էջ 28:

Այնուհետև՝ Սարգիս Քամալյանը մանրամասնորեն պատմում է Մ. Նալբանդյանի վերոհիշյալ նկարի պատրաստման հանգամանքները։ Նկարը պատրաստվում է, սակայն այն բազմացնող Շ-ն միամտաբար մի օրինակը դնում է ցուցափեղկի մեջ, որը և գրավում է ոստիկանութեան ուշադրությունը, կատարվում են խուզարկություններ, ձերբակալվում է այդ գործի նախաձեռնողներից Տիգրան Նավասարդյանը, որն ութ տարի մնում է բանտում։

Քամալյանի հուշերից երևում է, թե ոստիկանությունը ինչպիսի խստությամբ է հետևել Նալբանդյանի երկերը արտագրողներին և նրա նկարները պահողներին։ Նրանց նկատմամբ կիրառվել է նույնպիսի խստություն, ինչպիսի խստություն կիրառվում էր ինքնակալական կարգերի դեմ ուսուցիչին գործունեություն ծավալած մարդկանց նկատմամբ, նրանց ենթարկելով բանտի ու աքսորի։

Նույն այդ թվականներին Մ. Նալբանդյանի արգելված նկարները լնփանցում են նաև Երևան և տարածվում երիտասարդության մեջ։ Հայտնի է, որ ժամայարմական մի ամբողջ գործ է սկսվում 1874 թվականին՝ կապված Նալբանդյանի նկարների տարածման հետ։ Այդ գործի հետ կապված գրագրություններից հայտնի չի, թե Երևանում տարածված լուսանկարները նույն այն լուսանկարներն են, որոնց վրա տպված է եղել «Ազատութիւնը», սակայն այն փաստը, որ 70-ական թվականներին թե՛ Ռյուրիկայում և թե՛ Կովկասում տարածված էր վերոհիշյալ լուսանկարը, ինչպես այդ վկայում է նաև Սարգիս Քամալյանը, անտարակույս է դարձնում, որ Երևանում նույնպես Նալբանդյանի նկարների հետ միասին տարածվում էր «Ազատութիւնը»։

Նալբանդյանի երկերի, անշուշտ, այդ թվում և «Ազատութիւն» բանաստեղծության՝ Ալեքսանդրապոլում ևս գաղտնի կերպով տարածվելու վերաբերյալ կան տեղեկություններ։

Մ. Նալբանդյանի երկերով խանդավառված, նրա գաղափարական ազդեցությունը կրող երիտասարդներից կազմակերպվում են առաջին ազատագրական խմբակները։

Նման խմբակներից մեկը հայտնաբերվում է 1875 թվականին Ալեքսանդրապոլում։

Մամուլում այդ խմբակի հայտնաբերման առթիվ հրապարակված նյութերից պարզվում է, որ Արսեն Կրիտյանի խմբակի հիմնական հանցանքը եղել է այն, ինչի համար բանտարկում և մարդկանց աքսորում էին նաև Ռյուրիկայում, այսինքն Հայկի, Վարդանի և Նալբանդյանի նկարները, Նալբանդյանի ստեղծագործությունները պահելու հանցանքը։

Կ. Պոլսում այդ թվականներին հրատարակվող «Լույս» շաբաթաթերթը, որը առաջինն է անդրադարձել Արսեն վարժապետ Կրիտյանի խմբակի հայտնաբերման և այդ խմբակի ղեկավարների ձերբակալմանը, խմբակը կոչում է տյնպիսի մի ընկերություն, որը կազմված էր «Ազգին օգտակար ծառայություններ րենելու» գովելի նպատակով։

Անդրադառնալով խմբակի ղեկավարների ձերբակալման շաբաթիթերթին, «Լույսը» գրում է, որ ոստիկանությունը ընկերության գրասենյակում հայտնաբերել է «ազատասիրական և հայրենասիրական մատյաններ, հայոց պատմություններ, Հայկա. Վարդանա և այլն պատկերներ և Նալբանդյանցի և այլոց դրություններ. և ասոնց հետ նաև նույն ընկերության ատենագրությունները»։

«Լույսը» մանրամասնություններ չի հաղորդել, թե Նալբանդյանի որ ստեղ-

ծագործություններն են, որոնք տպագիր կամ արտագրված վիճակում պահպանվել են Արսեն վարժապետի խմբակի գրասենյակում, բայց ամենայն հավանականությամբ դրանց մեջ պետք է լինեն «Ազատություն» բանաստեղծությունը, «Ներկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը:

«Ազատությունը» իրենց տպագիր պրոպագանդայի համար օգտագործում են նաև 1882 թվականին Մոսկվայում կազմակերպված «Հայրենասերների միության» անդամները:

Այդ միությունը, որը մոտիկից արձագանքել է թյուրքական բռնապետության դեմ մղվող հայ ազգային ազատագրական պայքարին, ժողովրդին ուղղված իր թողուցիկներից մեկի համար որպես բնաբան բերում է «Ազատության» հետևյալ տողերը.

Պետք է գոռամ, պետք է կրկնեմ,
Անդադար ազատություն¹.

Բացի լուսանկարներից, որոնք անշուշտ պահվում էին երիտասարդության ժողագրպաններում և զարդարում պատերը, Կ. Պոլսում, Իզմիրում, Թիֆլիսում, Նոր Նախիջևանում և այլ քաղաքներում Մ. Նալբանդյանի նկարը տարածվում էր նաև մետաքսյա թաշկինակի վրա տպված:

Պահպանվել և մեզ հասել են նման նկարներից մեկ երկուսը: Գրական թանգարանի Մ. Նալբանդյանի արխիվում պահվում է այդպիսի մի մեծադիր նկար՝ պատրաստված բավականաչափ ճաշակով, ներքևում հետևյալ մակագրությամբ. «Մ. Նալբանդյանց 1829—1866»: Նույն նկարի մի այլ օրինակն էլ պահվում է Նոր Նախիջևանում, Մ. Նալբանդյանի տանը:

Ձեռքով կատարված նկարների վրա էլ շատ հաճախ գրվել են «Ազատությունից» քառյակներ: Գրական թանգարանում պահվում է Մ. Նալբանդյանի մի մեծադիր նկարը՝ պատրաստված Նոր Նախիջևանի թեմական դպրոցի նկարչության ուսուցիչ հաշատուր Հյուսիկյանի կողմից, 1904 թվականին: Այս նկարի ներքևում կարդում ենք Նալբանդյանի ստորագրությունը և «Ազատություն» բանաստեղծության առաջին ութնյակը:

Նկարիչ հաշատուր Հյուսիկյանը դրանից երեք տարի առաջ, 1902 թվականին հրատարակել է Նալբանդյանի կենսագրությունը ձեռքով, այնպես գրված, որ նայողը տեքստի ֆոնի վրա նկատում է Նալբանդյանի նկարի սիլուետը: Հյուսիկյանը նույն ձևով հրատարակել է Բաֆֆու և Պատկանյանի նկարները:

60-ական թվականների կեսերից Նալբանդյանի «Ազատությունը» տեղ է գտնում երգարաններում: Մեզ ծանոթ առաջին երգարանը, որ տպագրել է «Ազատություն» բանաստեղծությունը, ինչպես՝ ասվեց, Միքայիլ Միանսարյանի «Քնար հայկական» ընդարձակ երգարանն է: Այնուհետև այն տեղ է գտնում այլ երգարաններում, ինչպես «Սոխակ Հայաստանի» տարբեր հրատարակություններում և այլն:

Ցենզուրական նկատառումներով պատահել է, որ ամբողջ մի տասնամյակ, երբեմն ավելի «Ազատությունը» որևէ երգարանում չի զետեղվել:

Եթե «Ազատության» տպագիր օրինակները ենթակա են հղել նման արգելի-

¹ Փաստը վերցրել ենք պրոֆ. Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը սովորական բանականության դեմ» անտիպ աշխատությունից:

ների, ապա այն ամենախստողուն ցենզուրական պայմաններում անգամ արտագրվել է ձեռքով և տարածվել մասնավորապես բարձր դասարանների տշակերտների մեջ:

Մատենադարանում, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Գրականության և արվեստի և այլ թանգարաններում ու գրասրահներում պահվում են բազմաթիվ երգարաններ, որոնք միմյանցից արտագրված են՝ սկսած «Ազատություն» բանաստեղծության լույս ընծայման առաջին օրերից: Այսպես, Մատենադարանի № 8764 տաղարանում, որն արտագրված պետք է լինի 60-ական թվականների վերջերին կամ 70-ական թվականների սկզբներին, մենք գտնում ենք «Ազատությունը»: Նալբանդյանի բանաստեղծությունները արտագրված ենք գտնում նաև Մատենադարանի № 3608 ձեռագրում, Մատենադարանի արխիվային բաժնում պահվող Ս. Ամատունու երգարանում (ձայնագրված) և այլ ձեռագիր տաղարաններում, ինչպես նաև Գրիգոր Տեր-Պողոսյանի երգարանում (1880-ական թվականների սկզբներին), ախալցխացի Կարապետ Գրիգորյանի երգարանում (1885) և այլ բազմաթիվ երգարաններում:

«Ազատություն» բանաստեղծությունը նույն այդ թվականներից տպագիր և ձեռագիր երգարաններում տարածվում էր նաև արևմտահայ իրականության մեջ: Տպագիր հնագույն երգարանը, որ լույս է տեսել արևմտահայ իրականության մեջ և պարունակում է Մ. Նալբանդյանի «Ազատությունը», «նոր երգարան կամ Քնար Հայաստանին» է, որ լույս է տեսել 1860-ական թվականների սկզբներից և մի քանի անգամ արտատպվել է:

Ծրանում կա այդ երգարանի ութերորդ տպագրությունը միայն, որ լույս է տեսել 1872 թվականին և որի հենց սկզբին՝ պաշտոնական մաղթանքներից ու քայլերգներից հետո տպագրված է «Ազատությունը»²: Մեր ձեռքի տակ չկան նրա ավելի հին տպագրությունները, սակայն այն հանգամանքը, որ 1862—72 տասնամյակում ցենզուրական անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններ են եղել Թյուրքիայում, պետք է ենթադրել, որ թեկուզ 60-ական թվականների վերջերից «Ազատությունը» տեղ է գտել «նոր երգարանի» տարբեր հրատարակություններում:

Համիդյան բռնապետության ամբողջ շրջանում, այսինքն՝ 1876—1908 թթ. Թյուրքիայում ոչ մի երգարան լույս չի տեսել, եթե չհաշվենք միսիոնարների կողմից հրատարակված հոգևոր երգերի ժողովածուները, որոնք պարունակում էին աղոթքներ:

Մինչև 1879 թվականը, այսինքն՝ մինչև ռուս-թյուրքական պատերազմից հետո սկսվող քաղաքական խստությունները, Մ. Նալբանդյանի մասին երբեմն գրվում է մեծ զգուշությամբ:

Այսպես, 1875 թվականին լույս է տեսնում Ս. Տեր-Սարգսենցի «Վառարանի մը կայծեր» բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ մենք մի ոտանավոր էլ գտնում ենք՝ նվիրված Միք. Նալբանդյանին: Այդ բանաստեղծությունը որպես զեղարվեստական գործ, որևէ արժեք չունի. թույլ, նախվ մի երկ է, սակայն կարևոր է հեղինակի քաղաքական համոզմունքների որոշման տեսանկյունից:

¹ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Ս. Ամատունու ֆոնդ, Թղթապանակ № 35, վավ. 18:

² «Նոր երգարան կամ Քնար Հայաստանին» բովանդակություն աղյային երգերու և բանաստեղծական բերթվածոց, սկսյալ յառաջնո տարեղարձի սահմանադրության միջնյայմամ, 8-րդ տպադր., Կ. Պոլիս, 1872, էջ 11:

Տեղեկագիր 11—5

«Նալբանդյանի ուխտը» վերնագրված այդ բանաստեղծությունից երևում է, որ Տեր-Սարգսենցին, ինչպես այդ տասնամյակներում շատ-շատերի, ամենից առաջ գրավել է Մ. Նալբանդյանի ազատասիրությունը, ազատության համար մաքառելու նրա անհողհողդ կամքը: «Նալբանդյանի ուխտը» ամբողջապես գրված է «Ազատության» մեջ բարձրացվող գաղափարների պաշտպանությամբ, անգամ նրա լեզվական ատաղձի օգտագործմամբ:

Մ. Նալբանդյանին բանաստեղծություններ են նվիրել շատերը (Բաֆֆի, Գ. Բարխուդարյան, Տեր-Սարգսենց, Թ. Թերզյան և ուրիշներ), որոնք իրենց գեղարվեստական կատարմամբ շատ ավելի բարձր են Տեր-Սարգսենցի վերոհիշյալ ոտանավորից, սակայն, նկատի ունենալով, որ դրանց մեջ ամենից շատ «Նալբանդյանի ուխտը» բանաստեղծությունն է առնչվում «Ազատության» հետ, մենք ավելորդ չենք համարում այն մեջ բերել:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑԻ ՈՒՒՏԸ

Ազգ՝ և ազատություն.
Օրորոցիդ ուխտավոր.
Մայրս զիս մատաղ ձեզ խոստանց.
Ես այն օրից ճամբա ելա
Սպանդարան գնալ ուղիդ,
Ուր մեր ազգության դահիճք.
Ինձ սպասում էին,
Զոհագործելով զիս.
Ազգասիրությունս բավել:
Այո, այո, չեմ դրժեր
Մորս ուխտերը.
Կատարում եմ իր կտակ,
Որ պարզերես համարձակ
Օրորոցիդ ուխտված,
Եվ զոհով սրբված,
Կրնամ ասել
Ազգ և ազատություն
Զոհեմ ձեր սիրուն 1:

Գրեթե նույն ժամանակամիջոցում (1874) Թիֆլիսում լույս է տեսնում Բաֆֆու, «Փունջ» ժողովածուի առաջին հատորը, որտեղ զետեղված է հեղինակի մի բանաստեղծությունը («Նվեր N-ի հիշատակին»), ամենայն հավանականությամբ նվիրված Մ. Նալբանդյանին: Այդտեղ մենք որոշակի տեսնում ենք «Ազատության» արձագանքները: Խոսելով «Երկաթի կապանք, բանտ և աքսորանք» տեսած N-ի մասին, Բաֆֆին գրում է.

Դեռ մանկությունից այդ անգութ աշխարհ
Ուղղեց քո առջև փշոտ ճանապարհ 2:

1879 թվականին լույս է տեսնում լիբերալ բունասեր Ն. Դիվանյանի «Առձեռն քառարանը», որտեղ կենսագրական տեղեկություններ ենք գտնում մի շարք հայ

1 Ս. Տեր-Սարգսենց, Վառարանի մը կայծեր, Կ. Պոլիս, 1875, էջ 18:

2 Այս փաստի վրա մեզանից առաջ ուշադրություն է դարձրել Ընկ. Մ. Նահապետյանը՝ «Գրական թերթում» տպագրած իր մի հոդվածում:

գրողների մասին: Ընթերցանյալը Մ. Նալբանդյանին հատկացրել է մի քանի տող, սակայն չի վարանել նրան ընունթագրելու որպես «մեծահռչակ հրապարակագիր, գրագետ և հայրենասեր», մի մարդ, որը հայտնի է բոլորին իր «ազատամիտ և հեղափոխական գաղափարքն»: Ընթերցանյալին նույնպես Նալբանդյանը գրավել է ամենից առաջ որպես «Ազատության» հեղինակ: Նա Նալբանդյանի երկերից հիշատակում է միայն այդ գործը՝ գրելով. «հեղինակ «Ազատն աստված» և այլ ժողովրդական երգոց»: Ժողովրդական ասելով, անշուշտ, բառարանի հեղինակը հասկացել է ժողովրդականությունն վայելող:

Նույն 1879 թվականին լույս է տեսնում միստիկ բանաստեղծ, իր էկեկտիկ հայացքներով հայտնի Ե. Տեմիրճիպաշյանի մի փոքրիկ գրքուկը «Նոր կյանք» վերնագրով: Տեմիրճիպաշյանը, հավանաբար, ոչ այնքան Նալբանդյանի գաղափարները բաժանելու, որքան «Ազատության» վայելած ժողովրդականությունն օգտագործելով, իր գրքերից մի քանի հարյուր օրինակ ավելի վաճառելու նպատակով, առիթ ստեղծելով, մեջ է բերել «Ազատության» առաջին և վերջին ութնյակները, դրանով հանդես գալով միակ մարդը, որ համիդյան բռնապետության տարիներին համարձակվել է հրապարակել «Ազատությունը» թեկուզ կրճատ ձևով:

Տեմիրճիպաշյանը, այդ գրքում, կանգ առնելով ժամանակի հայ պարբերական մամուլի վրա, «Հյուսիսափայլի» մասին գրում է. «Ոչինչ ավելի տևական փայլ ձգած, ոչինչ ավելի լույս ծավալած է յուր շուրջ, քան այն թերթ, ուր Նալբանդյանց ազատությունի առաջին ճիշն արձակեց»:

«Ազատ Աստված այն օրից...» և այլն¹:

* * *

1870-ական թվականների սկզբներից Նալբանդյանի արձակ և չափածո երկերը, այդ թվում «Ազատություն» բանաստեղծությունը, լայնորեն տեղ են հանում դպրոցական դասագրքերում: Երգարաններից հետո դասադրքերն են, որ իրենց մեծ տիրույթով մասսայականացնում են այդ բանաստեղծությունը: Գրականության պատմության դասագրքերում ընդհանրապես, առանց ամբողջական տեքստը մեջ բերելու խոսվում էր «Ազատության» մասին, քրեստոմատիաներում — եթե ներում էին ցենզուրական պայմանները — և՛ տպագրվում էր բանաստեղծության տեքստը, և՛ երբեմն ջերմ տողեր էր նվիրվում դրան:

Գրականության պատմության դասագրքերից հնագույնը, որը մեզ հայտնի է և խոսում է Մ. Նալբանդյանի «Ազատության» մասին, Պետրոս Դուրյանի «Կրտսեր եղբոր» Նիկիտ Դուրյանի «Պատմություն հայ մատենագրության» դասադիրքն է, որ լույս է տեսել 1885 թվականին: Այնտեղ մենք ջերմ տողեր ենք ստանում Մ. Նալբանդյանի և նրա «Ազատություն» մասին:

«Իբրև բանաստեղծ, — կարդում ենք այդ դասագրքում, — Նալբանդյան թողած է հոգեշունչ և անմահ երգեր, որպիսիք են «Ազատն աստված», «Խտալացի աղջկա երգն», «Երագն» և այլն և փայլած է «Հյուսիսափայլի» էջերուն մեջ, կեղծ ստորագրությանց տակ իր անկեղծ սկզբանց ու զգացմանց թարգման կանգնելով: Զանազան արձակ գրվածոց մեջ ղորս երկասիրած է նալ-

1 Ե. Տեմիրճիպաշյան, Նոր կյանք, Կ. Պոլիս, 1879, էջ 34:

բանդյան, գլխավոր տեղ մը կբռնե «Երկրագործություն» անուն ընկերաբանական գործն»¹։

Մ. Նալբանդյանի մասին նույնպիսի հիացական տողեր մենք գտնում ենք 1888 թվականին լույս տեսած «Ճաշակ արդի հայ մատենագրության» քրեստոմատիայում, որտեղ արտատպված են ընդարձակ հատվածներ «Երկրագործությունից» «Հայաստանցի պանդուխտը» վերնագրով։ Երևի ցենզուրական նկատումներով «Ազատությունը» այստեղ չի զետեղված, սակայն այդ բանաստեղծության մասին խոսվում է հիացմունքով։

«Վաղամեռիկ բանաստեղծն ունի շատ մը քերթվածներ, տաղեր, երգեր,— կարդում ենք «Ճաշակում»,— յորոց «Ազատն աստվածն», «Երազն», «Գարնանամուտն», «Խալալացի աղջկա երգն» անհուն զգացմամբ ներշնչյալ գողտրիկ տաղեր են»²։

Թե՛ Եղիշե Դուրյանը և թե՛ «Ճաշակ արդի հայ մատենագրության» ժողովածուն կադմոդ Ա. Պիպեռճյանը եղել են սահմանափակ բուրժուական մտածողներ։ Եվ եթե, այնուամենայնիվ այդպիսի դրվատալից տողեր են նվիրել Մ. Նալբանդյանի անմահ երկերին, այդ ամենից առաջ պետք է բացատրել դրանց անսահման ժողովրդականությունը։

1889 թ. Թիֆլիսում հրատարակվում է Հովհ. Նազարյանցի «Ընտիր հատվածներ» քրեստոմատիայի Ա. մասի նոր տպագրությունը (Ա. տպագր. 1884 թ.), որը պարունակում է հայ արձակ գրականությունից հեղինակի ճաշակով ընտրված մի շարք հատվածներ։ Այնտեղ զետեղված են նաև Մ. Նալբանդյանի արձակ երկերից մի քանի հատվածներ, մեծ մասամբ որպես աղբյուր նշելով կամ «Հյուսիսասիայը» և կամ Կոմս էմմանուել ստորագրությունը։

Հովհ. Նազարյանցի «Ընտիր հատվածներ» քրեստոմատիայի Բ. մասում, ուր մի ստվար հատոր է, մենք Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը չենք գտնում, մեր կարծիքով դա մոռացության արդյունք չէ։ Անշուշտ, Նազարյանցի պահպանողական աշխարհայացքը կարող էր պատճառ դառնալ, որ նա չխանդավառվի այդ բանաստեղծությամբ, սակայն մեղ թվում է՝ միայն դասպարքի հեղինակի աշխարհայացքով չպետք է բացատրել վերոհիշյալ փաստը, այլ այն բանով, որ նա պարզապես վախեցել է ցարական ցենզուրայից, 1889 թվականին զգուշանալով հրատարակել մի այնպիսի բանաստեղծություն, որը «Քնար հայկականից» հետո, այսինքն՝ 1868 թվականից հետո՝ ամբողջ մի քսանամյակ արևելահայ իրականության մեջ չէր հրատարակվել։ Որ ցենզուրական նկատումներ դեր է կատարել Հովհ. Նազարյանցի համար՝ նյութերի ընտրության գործում, երևում է այն բանից, որ անգամ «Երկրագործությունից» ընտրված անմեղ հատվածը, որը վերաբերում է պանդխտության դեմ պայքարելուն, Նազարյանցի քրեստոմատիայում զետեղված է ոչ թե նշելով բուն աղբյուրը՝ «Երկրագործությունը», այլ նախորդ տարում, Կ. Պոլսում լույս տեսած «Ճաշակը», որտեղ առաջին անգամ տպագրվել էր այն «Հայաստանցի պանդուխտը» վերնագրով։ Տարակույս չի կարող լինել, որ Հ. Նազարյանցին քաջ ծանոթ էր այդ հատվածի

¹ Եղիշե վ. Դուրյան, Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերը, Կ. Պոլիս, 1883, էջ 103։

² Ճաշակ արդի հայ մատենագրության. ծաղկաբաղ աշխարհիկ լեզվե հանդերձ կենսագրական, պատմական դիցարանական և աշխարհագրական ծանոթություններ, Կ. տպագրություն, փոփոխյալ և խիստ նոսաքցյալ. աշխատասիրություններ Ա. Պիպեռճյանի, Կ. Պոլիս, 1888, էջ 269։

սղբերը, մանավանդ որ Պիպեռճյանը իր «Ճաշակ» ժողովածուում որպես սղբեր նշել էր «Երկրագործությունը»:

1889 թվականից առավել մեծ չափով սաստկանում է ցենզուրական խստությունը Թյուրքիայում: Հրապարակվում են հատուկ օրենքներ, որոնք արգելում են մամուլում և այլ հրատարակություններում ազգային ազատագրական գաղափարներ արտահայտող բաների գործածումը: Պաշտոնապես հայտարարված այդ բաների թվին էին պատկանում Հայաստան, ազգ, ազատություն, հեղափոխություն: Արգելված անունների մեջ էր և Նալբանդյանի անունը: 1889 թվականից մինչև 1908 թվականը մենք արևմտահայ հրատարակություններում ոչ միայն չենք գտնում Նալբանդյանի երկերից որևէ հատված, այլև Մ. Նալբանդյանի մասին որևէ ուղղակի հիշատակություն:

Սակայն, նույնիսկ այդպիսի սլայմաններում Նալբանդյանի մասին գրվում են աշխատություններ, պրոպագանդվում նրա գաղափարները՝ եզոպոսյան լեզվով: Ստեղծվում է մի ամբողջ լեկսիկոն Նալբանդյանի գաղափարները ընթերցողներին ներկայացնելու համար: Նալբանդ — բառը թարգմանվելով հայերեն, Միքայել Նալբանդյանը դառնում է Միքայել կամ Միշել Պաշտարյանց, նրա «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը հիշատակվում է որպես «իմաստասիրական» մի գործ, նրա գաղափարական ուսուցիչներից Գերցենը՝ «Ոմն փաստաբան», «Կոլոկոլը»՝ «Ջանգակ լրագիր», «Ազատություն» բանաստեղծությունը հիշատակվում է որպես «Աշխատություն» և այլն: Այդ լեկսիկոնի օգտագործմամբ է, որ Ա. Այվազյանը 1893 թ. հրատարակած իր «Շար հայ կենսագրություն» աշխատության մեջ մի ամբողջ գլուխ է հատկացնում Նալբանդյանին, որի անունն անգամ չէին համարձակվում տալ ուրիշները: Պայմանական այս լեկսիկոնի հմուտ օգտագործումով Ար. Արփիարյանը իր խմբագրած թերթում մի առաջնորդող է նվիրում Ա. Այվազյանի գրքին և խոսում «Միք. Պաշտարյանցի» մասին¹:

Առավել բնորոշ է Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության պրոպագանդան, նույն եզոպոսյան լեզվով: «Ազատությունը» ձեռքից ձեռք արտագրվում էր հարյուրավոր մարդկանց կողմից՝ գաղտնի կերպով արտասանվում էր, երգվում: Հրատարակիչները, դասագրքերի հեղինակները, սակայն, որոնք նախորդ տասնամյակներում իրենց հրատարակությունները զարդարում էին Նալբանդյանի բանաստեղծություններով, այժմ հարկադրված էին դուրս թողնել դրանք իրենց հատորներից: 1888—1908 թթ. տասնամյակում լույս տեսած բազմաթիվ դասագրքերում, ժողովածուներում մենք չենք հանդիպում «Ազատություն» բանաստեղծությանը:

Այդ բանաստեղծության տպագրությունը կապված էր մի շարք արգելքների հետ: Նախ արգելված էր հեղինակի՝ Նալբանդյանի անվան հիշատակությունը:

Կար ավելի մեծ դժվարություն. արգելված էր «Ազատություն» բառը, որը սուկա էր և՛ վերնագրում, և՛ տեքստի մեջ մի քանի տեղի ծվ, որ ամենից կարևորն էր, արգելված էր ամբողջ ոտանավորը իր ազատասիրական, ռևոլյուցիոն լուսնդակության պատճառով:

Նույնիսկ այդպիսի խստագույն պայմաններում Նալբանդյանի «Ազատու-

¹ Այս փաստի վրա ընթերցողի ուշադրությունը առաջին անգամ հրավիրել ենք մեր «Նալբանդյանի Արփիարյան և արևմտահայ դրականությունը» հոդվածում: Տես «Արփիարյան» ժողովածու, 1948, էջ 163—172:

թյան» մասին խոսվում է որոշ հրատարակությունների մեջ, այն տպագրվում է ամբողջությամբ:

Ա. Այվազյանը իր վերոհիշյալ աշխատության մեջ, թվարկելով Մ. Պայտարյանցի բանաստեղծությունները, «Մանկության օրերից» անմիջապես հետո հիշատակում է նաև «Աշխատություն» վերնագրով մի բանաստեղծություն: Նալբանդյանն այդ վերնագրով բանաստեղծություն դրել է, սակայն այն պատկանում է հեղինակի երկրորդական գործերի թվին, մինչդեռ Այվազյանը հիշատակում է նրա գլուխ գործոց և տարածված երկերը:

Մեզ թվում էր, որ «Աշխատություն» բանաստեղծության տակ պետք է հասկանալ Նալբանդյանի «Ազատություն» արգելված բանաստեղծությունը:

Երբ մեր այս ենթադրությունը հայտնեցինք պրոֆ. Հ. Աճառյանին, հանգուցյալ պրոֆեսորը հաստատեց այն, ավելացնելով, որ 90-ական թվականներին Մ. Նալբանդյանի «Ազատությունը» իրենց դասագրքերում տպագրվում էր «Աշխատություն» վերնագրով: Պրոֆ. Հ. Աճառյանը պատմեց մեզ հետևյալը, որը մենք գրի առինք իր ներկայությամբ.

«Մենք այդ տարիներին սովորում էինք Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանում: Մեզ արգելված էր հայոց պատմություն սովորելը: Մեր դասախոսներից մեկը, շատ զաղտնի, վերարկուի տակ թաքցրած, Երուսաղեմում տպված մի Հայոց պատմություն էր բերում դպրոց, զգուշությամբ հանում և կարդում էր, փստահ մեր զաղտնապահությանը:

Ամենախիստ արգելքներ էին դրված Մ. Նալբանդյանի երկերի վրա: Մենք մեծ սիրով մեր երգարաններում արտագրում, արտասանում, երգում էինք Մ. Նալբանդյանի երգերը, մասնավորապես «Ազատությունը»: Երիտասարդության այս պահանջը բավարարելու համար էր, որ դասագրքեր կազմողները «Ազատությունը» տպագրում էին՝ «ազատություն» բառը վերածելով «Աշխատության»:

Հիշում եմ մի դեպք: Այդպիսի մի դասագիրք նոր էր լույս տեսել: Կենտրոնականի բոլոր աշակերտների սեղանին կար: Մենք կարդում էինք Նալբանդյանի բանաստեղծությունը, երբ դասարան մտան դպրոցի տնօրենը և երկու ոստիկան: Նրանք իսկույն հավաքեցին դասագրքերը, նայեցին, ոչինչ չգտան և կրեքեցին: Այդպես հաճախ էր կատարվում՝ հատկապես ուսումնական տարվա սկզբի օրերին, որից հետո ոստիկանության կնիքը չկրող գրքեր կարդացողները հեռացվում էին դպրոցից: Ոստիկանների հեռանալուց հետո մենք դասագրքի «Աշխատություն» բառը դարձրինք «Ազատություն» և մեզանից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ունեցավ «Ազատության» տպագրված օրինակը, այն էլ ոստիկանության կողմից հաստատված:

Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Հանրային դրադարանում պահվում է 1897 թ. Կ. Պոլսում լույս տեսած մի դասագրքից երկու օրինակ, որը լիովին հաստատում է պրոֆ. Հ. Աճառյանի վերոհիշյալ հավաստիացումը:

Այդ՝ Ս. Դավթյանի կազմած «Փունջ» դասագրքի շորրորդ հրատարակությունն է, որի վերջին էջում տպագրված է Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը, անստորագիր: Ազատություն բառը ամեն տեղ, այդ թվում և վերնագրում փոխված է աշխատության, իսկ վերջին ութնյակը նկատելի շափով փոփոխված է:

Որպես շատ հետաքրքրական մի փաստաթուղթ, որը վկայում է, թե Մ. Նալբանդյանի երկերը տարածելու համար մարդիկ ինչպիսի միջոցների են

դիմել, մենք այն նույնութեամբ, իր բոլոր փոփոխութիւններով, բերում ենք
այստեղ՝ ընդգծելով այն բառերը, որ փոխել է Սմբատ Դավթյանը:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Բարձրալն Աստված այն օրից
Երբ հաճեցավ շունչ փռել,
Իմ հողանյութ շինվածքին,
Կենդանութիւն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզօր թևերով
Աշխատութիւն գրկեցի:
Մինչ դիշերը անհանգիստ
Որորոցում կապկպած
Հալիս էի անդադար,
Մորս քունը խանգարած,
Խնդրում էի նրանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Աշխատութիւնը սիրել:
Թոթով լեզվիս մինչ կապերն
Արձակվեցան բացվեցան,
Մինչ ծրնոգորս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խոսքն, որ ասացի
Չեմ հայր կամ մայր կամ այլ ինչ,
«Աշխատութիւն» դուրս թռավ
Իմ մանկական բերանից:
«Աշխատութիւն» ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.
«Աշխատութեան» դու սիրող
Կամիս լինիլ այս օրից:
Ոհ, փշոտ է ճանապարհդ
Քեզ շատ փորձանք կը սպասե,
Բայց ջանասեր եղողին
Կյանքն անուշ սիրտն ճանգիստ է:
Աշխատութեան գոչեցի,
Թող միշտ շարժին յիմ ձեռքն
Արօր, գութան և մանգաղ
Թող միշտ գործեն ու փայլին.
Ես հաճապագ, անխափան,
Լինչն կենաց շունչ յետին
Պիտի գոռամ, պիտ կրկնիմ
Անդադար ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ !:

Ո՞րն է եղել Ս. Դավթյանի դրդապատճառը, այսպիսի մի քայլի դիմելիս.
միայն մեծ թվով ընթերցողներ ունենալու շահագիտական ձգտող՝ մը, թե գաղա-
փարական մի նպատակ:

Դավթյանը եղել է շափավոր հայացքների տեր մանր-բուրժուական մի
մանկավարժ, հայ թատրոնի պատմութեամբ զբաղվող մի բանասեր: Սերած ի-

1 Սմբատ Դավթյան, Փունջ, աշխարհաբար հավաքածո արձակ և ոտանավոր նախնա-
կան կարգերու համար: Տպագր. Նորբորդ, Կ. Պոլիս, 1897:

ներով գավառից, այն էլ հայ ժողովրդի հարուստ բառու բանի կենտրոնից՝ Ակնից, նա նկատելի հակում է ունեցել դեպի ժողովուրդը, տոգորված է եղել դեմոկրատական որոշ գաղափարներով:

Այս բանը որոշակի երևում է նրա վերահիշյալ դասագրքում:

Ս. Դավթյանի «Փունջը» շատ կողմերով տարբեր է 90-ական թվականներին և 900-ական թթ. սկզբներին տպագրված բոլոր նման դասագրքերից: Մինչդեռ մյուս դասագրքերում (Ս. Դաբամաջյան, Գ. Հակոբ, և ուրիշներ) տպագրված նյութերը գերազանցապես կրոնա-բարոյախոսական են, աղոթքներ և մեծ մասամբ ֆրանսիացի հեղինակների երկեր, Ս. Դավթյանի դասագրքի նյութերի ճնշող մասը հայ իրականության հետ կապված գործեր են: Այնտեղ կան հայ հեղինակներից նմուշներ, հայկական հին մատենագրությունից հատվածներ, առակներ, ժողովրդական երգեր («Լուսնակն անուշ հովն անուշ»): Ի տարբերություն մյուս դասագրքերի, որտեղ արևելահայ դրականությունից և ոչ մի տող չկա, «Փունջում» մենք հանդիպում ենք Ղ. Աղայանի («Ճախարակ»), Բաֆու («Հասոյի երդը») երկերից հատվածների: Ավելին, այնտեղ անգամ ռուսական գրականությունից կան նմուշներ:

Ս. Դավթյանը կամեցել է իր դասագրքից օգտվող աշակերտների սեփականությունը դարձնել Մ. Նալբանդյանի «Ազատությունը» թե՞ ցանկացել է այդ ձևով այն տարածել առհասարակ երիտասարդություն մեջ:

Մեզ առավել հավանական է թվում վերջին ենթադրությունը:

Նախ ամբողջ դասագրքի ընդհանուր մակարդակին, — այսինքն տարրական դպրոցների մակարդակին — միանգամայն անհամապատասխան է «Ազատությունը», թեկուզ այն փոփոխություններով, որ հրատարակվել է. դա շատ ավելի չափահասների համար հասկանալի մի նյութ է:

Երկրորդ պրոֆ. Հ. Աճառյանի այն հավաստիացումը, թե իրենք, փոխելով մի քանի բառ, իրենց ձեռքի տակ ունենում էին Նալբանդյանի «Ազատությունը». ցույց է տալիս, որ այն ծառայում էր այլ նպատակի, քան որպես դասագրքային մի ընթերցանության նյութի:

Երկու փոքր փաստ են հաստատում են մեր այդ ենթադրությունը: Ի տարբերություն դասագրքի մյուս բոլոր նյութերի, որոնք տպագրված են արևմտահայ քերականությամբ, այդ թվում և արևելահայ գրականության նմուշները, «Ազատությունը» միակ բացառությունն է, որ լույս է տեսել արևելահայերեն Նալբանդյանի գրածին միանգամայն հարազատ քերականությամբ և ուղղագրությամբ: Պատահականության արդյունք չպետք է համարել նաև այն հանդամանքը, որ «Աշխատությունը» տպագրված է դասագրքի ամենավերջում, գրեթե առանձին թերթի վրա, որը հեշտությամբ կարելի էր կտրել, փոխել մի քանի բառ և ձեռքի տակ ունենալ տպագիր «Ազատությունը»:

¹ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանում պահված է այս դասագրքի միայն չորրորդ հրատարակությունից երկու օրինակ (1897): Դասագրքի առաջաբանի այն տողերը, թե անփոփոխ հրատարակվում է նախորդ հրատարակությունների տեքստը, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Նալբանդյանի «Ազատությունը» նման փոփոխություններով լույս է տեսել նաև նախորդ հրատարակություններում: Ամենայն հավանականությամբ արդեն 1893 թ. այդպես տպված պետք է լիներ: Ա. Այվազյանը, մեր կարծիքով, Մ. Նալբանդյանի բանաստեղծությունների շարքում հիշատակելով «Աշխատությունը», հետևել է «Փունջի» օրինակին:

84 ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Բարձրեալն Աստուած այն օրից
Երբ հաճեցաւ շունչ փռչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել,
Ես՝ անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքրս պարզեցի
Եւ իմ անգօր թեւերով
Աշխատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը՝ անհանգիստ՝
Օրօրոցում կապկապած՝
Լալիս էի անդսդար:
Մօրըս քունը խանգարած՝
Խնդրում էի նորանից
Բազուկներըս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Աշխատութիւնը սիրել:

Մ. Նալբանդյանի «Աղատութիւն» բանաստեղծութեան տարածումը
սուրբանական ցենզուրայի պայմաններում:

Մեր այս ենթադրությունը շատ ավելի հավանական կարող է թվալ, եթե կարողանանք ցույց տալ, որ դասագիրքը սովորականից բարձր տիրաժ է ունեցել:

Նախասովետական տարիներին սովորություն չի եղել գրքերի վրա գրելու տիրաժը: Բայց տարբեր աղբյուրներից հայտնի է, որ նման դասագրքերի տիրաժը 2000-ից չի անցել:

«Փունջի» կազմի վրա տպված է մի հայտարարություն, որից երևում է, որ այն լույս է տեսել այդ տարիների համար առասպելական թվացող մեծ տիրաժով: Այդ գրքի կազմի վրա մենք կարդում ենք:

«Գիրք մը, որ մեր մեջ կհասնի 23,000-ը օրինակի: Գիրք մը, որ հրապարակին վրա նախանձորդներ կունենա և կեղծերը շինելու կրելադրե զանոնք: Գիրք մը, որ սուղ ժամանակի մեջ նորանոր տպագրությանց կարժանանա: Գիրք մը, որ ուսանողին այնքան սիրելի կըլլա ու անոր սրտին ու մտքին կխոսի:

Այս փունջը չպիտի ծառայե միայն իբրև ընթերցանության գիրք, այլև մանավանդ արտասանության կամ ի բերան ուսման» (ընդգծումները մերն են — Կ. Ստ.):

Ավելի քան բացահայտ ձևով այստեղ ասված է «Փունջի» հրատարակման նպատակը: Մեր կարծիքով՝ այն բացատրությունը, որ տրված է նշելու համար այդ դասագրքի տարբերությունը մյուս նման դասագրքերից, վերաբերում է բացառապես «Ազատություն» բանաստեղծությանը, գուցե նաև Րաֆֆու «Հասույի երգին»:

Այն, որ այդ գիրքը դրական «Հրապարակին վրա նախանձորդներ կունենա և կեղծերը շինելու կթելադրե զանոնք», ցույց է տալիս, որ քաջալերված այն մեծ ընդունելությունից, որ գտել է «Փունջը» երիտասարդության շրջանում, հարկադրել է շահախնդիր մարդկանց՝ տպելու և վաճառելու նույնի կեղծը, քաղաքական պատասխանատվությունը թողնելով Սմբատ Դավթյանի վրա:

Սմբատ Դավթյանը կրե՞լ է արդյոք քաղաքական այդպիսի պատասխանատվություն, թե նրա այդ քայլը անցել է աննկատ սովթանական կառավարության կողմից: Դժվար է պատկերացնել մաքուր տասը տարի շարունակվող մի ձեռնարկում «Փունջ» դասագրքի բոլոր հրատարակություններում և աննկատելի մնալ համիդյան լրտեսների աչքից:

Մեր պրպտումները ցույց տվեցին, որ այդ բանը աննկատելի չի անցել և Սմբատ Դավթյանը տուժել է իր հանդուգն արարքի համար: 90-ական թվականների վերջերից նրան արգելվել է այլևս իր անունով դասագիրք հրատարակելը. ավելին, նրան արգելվել է նույնիսկ իր սեփական ստորագրությամբ մանուկներին տրված հոդված տպելը, այսինքն՝ Նալբանդյանի պատճառով այդ շատ չափավոր մտածողի անունն էլ ընկել է ցենզուրական ցուցակի մեջ և դարձել արգելված անուն:

1890-ական թվականների վերջերից մինչև, այսպես կոչված, օսմանյան սահմանադրության տարիները, Սմբատ Դավթյանի դասագրքերը լույս են տեսել առանց նրա ստորագրության, շատ ապուլիտիկ բովանդակությամբ: Այդ փաստը հեշտությամբ կարելի էր բացատրել հեղինակի լիազորագրությանցի էվոլյուցիայով՝ պրոգրեսիվ դադափարներից դեպի սահպանողականությունը, եթե օսմանյան սահմանադրությունից հետո նրա հրատարակած «Ծաղակ» նոր դրականության դասագրքի Բ. հատորի առաջաբանում մենք չգտնեինք ուղադրավ խոստովանություններ մեզ հետաքրքրող հարցի մասին:

Խոսելով համիդյան շրջանի ցենզուրայի մասին, Ս. Դավթյանը գրում է. «Այս գրքին հրատարակիչը ամեն առթիվ այդ դժվարությանց ենթակա, օր մ'ալ վերջասլես եկավ հասավ այն աստիճանին, ուր կառավարական տնօրինությանը արգելվեցավ մամուլի մեջ երևալ իբր վարիչ կամ խմբագիր կամ նույնիսկ իբր հոգևածագիր, ինչպես արգելված և գրավված էին իր սեփական հրատարակչություններն մեկ ֆանին»¹ (ընդգծումը մերն է — Գ. Ստ.):

Անտարակույս՝ Ս. Դավթյանի այդ արգելված և բռնագրավված գրքերի մեջ պետք է եղած լինե՞ր «Փունջ» դասագիրքը Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության համար:

Անգրագատնալով իր կազմած դասագրքերին, Ս. Դավթյանն այդ դասագրքի առաջաբանում գրում է.

«Բավական թվով դասագրքեր, նույնպես հաշմված, աղավաղ պարունակությամբ, ջանացին զոհացում առաջ դպրոցական պետքերուն ու չի մոռացվիր թե անոնց հրատարակիչները զոհողության հասնոց ճիշդեր ստիպված էին»²:

Ս. Դավթյանի այս վերջին տողերը ցույց են տալիս, որ նա եզակի դեմք չի եղել, արգելված նյութեր հրատարակելու դործում: Նրա նման ուրիշներն էլ են եղել: Մենք արդեն դրանցից մի քանիսին ծանոթացանք՝ Ա. Այվազյան, Ա. Արփիարյան և ուրիշներ:

Ներկա աշխատության սահմանից դուրս է առհասարակ եզոպոսյան այն լեզվի բացահայտումը, որով խոսել են արևելահայ և արևմտահայ դործիչները 19-րդ դարի երկրորդ կեսում, մինչև 20-րդ դարի սկզբները, արևելահայ իրականության մեջ՝ մինչև 1905 թվականի ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակը, իսկ արևմտահայ իրականության մեջ՝ մինչև 1908 թվականի օսմանյան սահմանադրությունը: Դա շատ դժվարին, բայց միաժամանակ շատ հետաքրքրական ու հայ հասարակական մտքի պատմության համար կարևոր մի հարց է, որի ուսումնասիրումը պահանջում է տեական աշխատանք:

* * *

Մոտ 30 տարի խստագույն արգելքների տակ դնվելուց հետո 20-րդ դարի առաջին տասնամյակում որոշ հնարավորություններ են ստեղծվում Մ. Նալբանդյանի երկերի հրատարակության համար:

1905 թվականի ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին Ռոստոփովում լույս է տեսնում Նալբանդյանի երկերի ժողովածուի առաջին հատորը, որը պարունակում է հեղինակի բանաստեղծություններն ու հրապարակախոսական երկերը: 1906 թվականին նույն հրատարակությամբ լույս է տեսնում Նալբանդյանի երկերի Բ հատորը, որտեղ «Հիշատակարանի» հետ միասին, լույս է տեսնում նաև «Ազատությունը»:

1905 թվականի ռևոլյուցիայից հետո արևելահայ իրականության մեջ լույս են տեսնում բազմաթիվ ուսումնասիրություններ, դասագրքեր, ժողովածուներ, որոնք ազատ կերպով խոսում են «Ազատություն» բանաստեղծության մասին:

¹ «Ուշակ նոր դրականության», Բ. հատոր, էջ է:

² Նույն տեղում, էջ է:

կամ այն արտատպում նույնությամբ: Մենք ավելորդ ենք համարում այստեղ մանրամասնորեն կանգ առնել այդ բոլորի վրա¹:

Մ. Նալբանդյանի երկերին, այդ թվում «Ազատություն» բանաստեղծությանը նույնպիսի բախտ է վիճակվում Խյուրքիայում: Երեսուն տարվա արգելքներից ու հալածանքներից հետո 1908 թվականի օսմանյան սահմանադրության առաջին օրերից տպագրվում ու տարածվում են Նալբանդյանի բանաստեղծությունները պարունակող բազմաթիվ ժողովածուներ: Լույս են տեսնում տասնյակ երգարաններ, որոնց առաջին էջը դարդարում էր «Ազատությունը»:

Ինչպես ուսման-թյուրքական պատերազմի տարիներին, այնպես էլ 1908 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը՝ դարձյալ երեկույթներում, ցերեկույթներում, աղջային հանդեսներում ամենից շատ արտասանվում և երգվում են Մ. Նալբանդյանի «Ազատություն» և Ռ. Պատկանյանի «Հիմի էլ լռենք» բանաստեղծությունները:

Այդ հնգամյակում Կ. Պոլսում հրատարակված պարբերական մամուլի էջերում մենք գտնում ենք մի շարք տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, թե «Ազատություն» բանաստեղծությունն ինչպիսի արտակարգ ցնծությամբ ու խանդավառությամբ է ընդունվել հասարակության կողմից:

Կանգ առնել նման փաստերի վրա և թվարկել այդ բոլորը, անիմաստ է: Մենք ցանկանում ենք այդ փաստերից մեկը միայն հիշատակել այստեղ, որը վկայում է, թե «Ազատությունը» խանդավառել է ոչ միայն հայ երիտասարդությանը, այլև թյուրք առաջավոր ինտելիգենցիային:

1908 թվականի օգոստոսի 31-ին թյուրք և հայ կանանց Կուլտուրական միությունը Կ. Պոլսի Պերա թաղամասում կազմակերպում է մի երեկույթ, որի ծրագրի գեղարվեստական բաժնում կատարվում է Մ. Նալբանդյանի «Ազատություն» հայերեն լեզվով մի թրքուհու օրիորդ Սենիեի կողմից, որին սովորեցրել էր բանաստեղծուհի Սիպիլի դուստրը՝ օրիորդ Ատրինեն:

Այդ երեկույթի մասին Թեոդիկի տարեցույցում մենք կարդում ենք՝ «Դեռատի թրքուհին խանդավառ ծափերուն փեջ կողե Նալբանդյանի «Ազատ աստվածը»²:

Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը 19-րդ դարի վերջերին Ե. Օտյանը օգտագործել է մի պարոդիայի համար՝ ընդդեմ պատրիարք Օրմանյանի:

Օտյանը ծաղրել է Օրմանյանի թյուրքասիրությունը, ստրկական քծնանքը արյունաբորու սուլթան Աբդուլ Համիդի նկատմամբ, ծաղրել է այն, որ նա իր եկեղեցական դործունեության ամբողջ ընթացքում առաջնորդվել է ոչ թե հայ ժողովրդի շահերով, այլ սուլթանին հաճոյանալու ձգտումով:

Նալբանդյանի լիրիկական հերոսի ազատասիրությանը Օտյանը հակադրել է Օրմանյանի ստրկամտությունը:

Որպես «Ազատություն» բանաստեղծության հարյուրամյա կյանքում մի հետաքրքրական դեպք, մեջ ենք բերում այդ պարոդիայից մի քանի ութնյակ:

¹ Տե՛ս՝ Լեո, Թուսահայ գրականության պատմություն, Լ. Մանվելյան, հայ գրականության պատմություն, պրակ Բ, Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910:

² Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1914, էջ 22:

ՕՐՄԱՆՅԱՆԻ ԵՐԳԸ
 Կաթողիկոսն այն օրից
 Երբ հաճեցավ զիս օծել
 Եվ իբրև մի նոր փորձանք
 Եպիսկոպոս ձեռնադրել,
 Ես մեծաշունդ խնդուրով
 Երկու ձեռքս պարզեցի
 Եվ իմ զորեղ թևերով
 Սուլթան Համիդը գրկեցի:

Մինչ տարիներ շարունակ
 Արմաշի մեջ բանդված,
 Հալիս էի անդադար,
 Ազգիս քունը խանգարած,
 Խնդրում էի նրանից
 Ինձ պատրիարք անվանել,
 Ես այն օրից ուխտեցի
 Սուլթան Համիդը սիրել:

Երբ Սուլթանին ֆերմանով
 Պրևո գահը բազմեցա,
 Բախշիշներու խշրտոցեն
 Սիրտս ու հոգիս բերկրեցան:
 Նախկին խոսքն, որ ասացի
 Չեղավ ազգ մազդ կամ այլ ինչ,
 «Կեցցե սուլթան» դուրս թռավ
 Իմ առնական կոկորդից:

* * *

Մենք տեսանք թե մոտ 60 տարվա ընթացքում Մ. Նալբանդյանի «Ազատութիւն» բանաստեղծութիւնը ինչպիսի վիթխարի տարածում ունեցավ: Բայց մենք դերազանցապես կանգ առանք հայ իրականութեան շրջանակներում:

Այնպիսի մի սքանչելի բանաստեղծութիւն, ինչպիսին «Ազատութիւնն» է, որն իրավամբ կարող է զարդարել համաշխարհային գրականութեանը նվիրված յանթուղիաները, անշուշտ չէր կարող մնալ ազգային շրջանակներում:

Նալբանդյանի «Ազատութիւնը» սկսած 1890-ական թվականներից մինչև մեր օրերը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գանիերեն, ադրբեջաներեն, ուկրաիներեն և այլն):

«Ազատութեան» մեզ հայտնի ռուսերեն առաջին թարգմանութիւնը կատարվել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և լույս է տեսել «Армянский вестник»-ի 1916 թ. № 18-ում, որոշ կրճատումներով: Դրանից հետո արդեն սովետական տարիներին կատարվել են մի շարք նոր և ամբողջական թարգմանութիւններ, որոնցից առավել հաջողվածը պետք է համարել Վ. Կ. Չվյադինցևայի թարգմանութիւնը:

Ավելորդ չենք համարում ռուսերեն առաջին թարգմանութիւնն այստեղ մեջ քերել որպես նմուշ:

ПЕСНЬ О СВОБОДЕ

Лишь только первое дыхание
 Свободный Бог мне даровал,
 Еще ничтожное создание,
 К груди свободу я прижал.
 Когда был связан в колыбели
 И из пеленок я рвался.
 То дать мне воли не хотели...
 —Любить свободу поклялся.
 Когда язык мой стал впервые
 В устах невинных лепетать,
 „Свобода!“ слышали родные,
 А не слова „отец“ и „мать“.
 И прозвучал мне голос рока:
 Отсель свободен, воин ты!
 Но знай: трудна твоя дорога,
 На ней шипы все, не цветы!
 „Свобода!“ я воскликнул снова,—
 „Что козни, меч, огонь, борьба...
 И до конца, конца земного,
 Кричать так буду — до столба!“

* * *

«Ազատություն» անգլերեն թարգմանությունը կատարվել է 1896 թվականին, Ռոստոնում: Այդ թվականին լույս է տեսել այնտեղ հայ պոեզիային նվիրված մի ժողովածու, Ալիս Սթոն Բլեքվելի անմիջական նախաձեռնությամբ և թարգմանությամբ: Այդ ժողովածուում թարգմանություններ են կատարված դրեթե բոլոր աչքի ընկնող հայ բանաստեղծներից (Նալբանդյան, Պատկանյան, Նահապետ, Ալիշան, Պեշիկթաշլյան, Դուրյան և ուրիշներ): Ժողովածուի անգլերեն սիտղոսաթերթի կենտրոնում տպագրված է Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության վերջին քառատողը հայերեն լեզվով:

Ժողովածուում Մ. Նալբանդյանից ղեկավարված են «Ազատություն» և «Մանկության օրեր» բանաստեղծությունների թարգմանությունները:

Առավել հետաքրքիր պատմություն ունի Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության դանիերեն թարգմանությունը և տարածումը Սկանդինավյան երկրներում, Ինգա Նալբանդյանի ջանքերով:

Ինգա Նալբանդյանը դանիական ազնվական գերդաստանից սերած մի կին է, որը ժնկում սովորելով մի հայ երիտասարդի՝ Մ. Նալբանդյանի հետ, (հետագայում աստղագետ) սիրահարվում է նրան, հենց այդ պատճառով մեղծվում ու լքվում ընտանիքից, ամուսնանում Նալբանդյանի հետ և դալիս Պոլիս, սովորում հայերեն լեզուն, նվիրվում հրապարակախոսական ու մանկավարժական աշխատանքի:

Ինգա Նալբանդյանը սիրել է բազմաշարձար, տառապած ու միաժամանակ յանցյալի հարուստ կուլտուրա թանեցող հայ ժողովրդին և ցանկացել է նրա կուլտուրան ծանոթացնել իր հայրենակիցներին: Նա դանիական թերթերում գրել է հոդվածներ հայ ժողովրդի անցյալի պատմության ու կուլտուրայի մասին, միաժամանակ հայերենից դանիերեն թարգմանելով ու դանիական սարքերականներում հրատարակելով հայ շափածո գրականության ընտիր էջերը:

Եվ պատահական չէ, որ ինչպես շատ շատերի, այնպես էլ նրան առաջին հերթին հրապուրում է ազատաբաղձ հայ ժողովրդի քաղաքական ձգտումներն ու ոգորումներն արտահայտող Նալբանդյանի ու Պատկանյանի պոեզիան:

Մեզ մանրամասնությունները հայտնի չեն, թե Ինդա Նալբանդյանը քանի բանաստեղծություն է թարգմանել Նալբանդյանից, բայց կա հիշատակություն գրավոր աղբյուրներում, որ հայ դրականությունից նրա կատարած թարգմանությունները, այդ թվում «Ազատությունը» տեղ են գտել նրա «Boelgesang» («Կոհակերգ») ժողովածուի 5-րդ մասում: Նրա ժողովածուն լույս է տեսել Կոպենհագենում, 1905 թվականին:

Անշուշտ, դժվար է սպառիչ խոսք ասել նախասովետական շրջանում Մ. Նալբանդյանի երկերի, մասնավորապես «Ազատության» թարգմանության մասին: Տարբեր երկրներում, տարբեր քաղաքներում, միանգամայն տարբեր համոզմունքների տեր մարդիկ տարբեր նկատառումներով կատարել են նման աշխատանք և զանազան լեզուներով հրատարակել հայ հեղինակների երկերը:

Այսպիսով, նախասովետական շրջանում, մինչև Հայաստանում Սովետական իշխանության հաստատումը, «Ազատություն» բանաստեղծությունը, արժանանալով բազմաթիվ հրատարակությունների, ձայնագրվելով մի քանի եղանակներով, տարածվել է հայ իրականության մեջ առավել մեծ չափով, քան որևէ մի այլ բանաստեղծություն՝ երբևէ:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Մ. Նալբանդյանի երկերի, այդ թվում «Ազատություն» բանաստեղծության ճակատագրի մեջ կատարվում է մեծ փոփոխություն: Մինչդեռ աշխարհի բոլոր ծայրերում սփռված զաղութահայությունը շարունակում է «Ազատությունը» դարձնել իր ազատասիրական երազանքների ու պայքարի արձագանքը և իր տասնյակ տպագիր երգարանները զարդարել այդ բանաստեղծությամբ, Սովետական Հայաստանում այն արդեն լույս է տեսնում որպես ազատագրված հայ ժողովրդի անցյալի կլասիկ դրականության ամենափայլուն նմուշներից մեկը ու որպես այդպիսին տարածվում, մասսայականացվում է բազմահազար աշխատավորության մեջ:

Թվարկել այն բոլոր հրատարակությունները, ժողովածուները, անթուղիաները, երգարանները, միջնակարգ դպրոցի դասագրքերը, բրեստովատիաները, որոնց մեջ տեղ է գտել «Ազատությունը» սովետական տարիներին, կնշանակի կազմել բիրիոդրաֆիական մի մեծ աշխատություն: Չհետապնդելով այդպիսի նպատակ, որպես եզրակացություն «Ազատություն» բանաստեղծության նախընթաց ամբողջ պատմության՝ պետք է նշել, որ այն նախորդ 60-ամյակում այնքան մեծ քանակությամբ չի հրատարակվել, բազմացվել ու տարածվել, որքան անցած 35 տարիների ընթացքում: Ավելին, այն մեկից ավելի անգամ թարգմանվելով ոուս մեծ ժողովրդի լեզվով, դարձել է Սովետական Միության բոլոր ժողովուրդների սեփականությունը և ղրանով էլ մտել համաշխարհային դրականության ոսկե ֆոնդը:

¹ Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1913, էջ 232: